

---

---

ԴՐՎԱԳՆԵՐ ՀՈՎՃԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ  
ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԳՈՒԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ  
(1905-1906 թթ.)

ՍՈՒՄԱՆՆԱ ՀՈՎՃԱՆՆԻՅԱՆ

Հովհաննես Թումանյանի գրական ժառանգությունը, նրա կյանքը, ազգային-հասրակական գործունեությունն իր բազմաշերտ ու բազմակողմանի դրսևումներով անսպաս է, և որևէ հետազոտող երբեք չի ասելու, թե ինքը ավարտուն, սպառիչ ու ամբողջական խոսք է ասել բանաստեղծի մասին:

Թեև Թումանյանի խաղաղափական գործունեության մասին բազմից ասվել ու խոսվել է, սակայն բազմաթիվ մանրամասներ, որոնք նոր լուս են սփռում Թումանյան-ազգային և հասարակական գործիք գործունեության վրա, դեռևս մնում են չլուսաբանված, նրա ժամանակակիցների հուշերում և արխիվներում, մասուլում, «Դաշնակցական գործ» վերնագիրը կրող դատական գործի արխիվային նյութերում:

Տվյալ դեպքում, խոսքը 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների մասին է, որոնց կենտրոնում կամա թե ակամա հայտնվեց Թումանյանը՝ ոտքից զլուխ զինված, բայց և խաղաղության սպիտակ դրոշը ձեռքին, ոռուսական զորագնդի զլուխն անցած, բայց հաշտարար դատավորի, խաղաղասեր և իմաստուն մարդու իր կեցվածքով, գողությունն ու սպանությունը շհանդուժող, մարդու զազանային բնազդներին ընդդիմացող, իշխանական թե կուսակցական ամեն մի սաղրանքի դեմ պայքարող, ամենուր չարն ու վատը ամենայն խստությամբ պատժող, բարին հաստատող իր մեծ առաքելությամբ:

1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներն ունեին մի շարք պատճառներ: Թումանյանի ժամանակակից պատմաքաններն ու բաղաքազետները, լրագրողներն ու հրապարակախոսները մատնանշում էին ամենատարրեր պատճառներ, որոնցից էին ցեղային թշնամությունն ու ատելությունը, թուրք տարրի կենդանական, բարբարոսական բնազդը, քանդելու, ջարդելու, կործանելու հակումները, միջերենիկական մշտական ազրեսիվությունը և բաղաքակրթվելու միանգամայն անրնդունակությունը, տնտեսական անհավասարությունը, հայ հարուստների սոցիալական կեղերումները, կուսակցական և կառավարական սաղրանքները և այլն:

Հայ-թուրքական ընդհարումներն անմիջական արձաքանքն էին Ռուսաստանում սկսված ժողովրդական շարժման, հասարակական մեծ տեղաշարժերի, որոնց դրդիքը և՝ իրականությունն էր՝ անվերջ զրկանքներն ու հալածանքները, և՝ Կովկասի թուրքերի ցեղային բնավորության առանձնահատկությունները, և՝ ցարական իշխանությունների «Բաժանի իր, որ տիրես» տիրահոչակ սկզբունքով իրականացվող քաղաքականությունը: Հիշեցնենք, որ այդ բաղաքականության և մեծ կայսրության շո-

Վիճատական ծրագրերի անմիջական իրազործողն ու կատարածուն Կովկասի փոխարքա Գոլիցինն էր:

«Անգիտակ, խավար թուրք մասսային հավատացրին, որ նրան կեղերողը, նրա աղքատության ու թշվառության պատճառը հայն է... թե միանգամից կարելի է տիրանալ հայի ունեցածին, որով և վերջ կդրվի իր թշվառությանը»:

Դրովկացիան ուժեղ էր... թուրք մասսան շարժվեց, բայց ոչ իր կեղերիշների, ոռու բյուրոկրատիայի և բեկության, այլ իր պես կեղերված հայ ժողովրդի դեմ, որի կողմից եղած դիմադրությունը նրան բնականաբար մղեց դեպի ցեղային թշնամություն, դեպի վայրենի ինստինկտներ»<sup>1</sup>, գրում է Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյանը) նույն այդ ընդհարումների օրերին գրած իր աշխատության մեջ և թե՝ իբրև պատմաբան, թե՝ իբրև ականատես վկայում, որ թուրք անգիտակից զանգվածը գենք դարձավ ուստական և թուրքական հետադեմ ուժերի ձեռքում, բացեց արյունոտ ու ամոթալի մի էջ Կովկասի տարեգրության մեջ: Նույնն է հավաստում Թումանյանը: Նկատի ունենալով 1905 թ. փետրվարն ու մարտը՝ նա գրում է. «Մենք այդ մի երկու ամսում դարեր ապրեցինք, Չինգիզ խանի ու Լենկ Թեմուրի դարերը: Նրանց անօրինությունները տեսանք 20-րդ դարում»<sup>2</sup>: Իրոք, Թումանյանը չէր կարող անտարեր մնալ, երբ իր իսկ խոստովանությամբ՝ «...այսքան տգեղ, այսքան լիրք, այսքան անիրավ, իրեշական կոիվ, ինչ-որ թուրք-հայկականն է – դժվար թե եղած լինի: Գուցե նախապատմական ժամանակներում, երբ մարդիկ իրար ուստում էին» (ԵԼԺ, 10, 15): Թումանյանին սարսափեցնում էր մարդու մեջ եղած զազանի արթնացումը, նրա առաքինությունը պահանջում էր վերականգնել խաղաղությունը, որպեսզի մարդ արարածը «շատ չքարքարուսանա... Մենք ուղղակի վայրենանում ենք» (ԵԼԺ, 10, 15):

Ընդհարումները սկսվեցին Բարվում<sup>3</sup> փետրվարի 6-ին, կիրակի օրը, երբ ինչ-որ թուրք Բարք ազգանունով, հայ եկեղեցու մոտ ատրանակով ծանր վիրավորում է մի հայ զինվորի<sup>4</sup>: Հայերը մարդասպանին հանձնում են ոստիկանին: Սակայն երբ նա ատրանակը ձեռքին փախչում է կառքից, հայերը հասնում են նրան և սպանում: Մահմեդականները, դիակը դնելով սայլի վրա, շրջում են թուրքական բոլոր թաղերով՝ գրգռելով թուրք ամրոխին: Հենց սա էլ դառնում է կոտորածի շարժառիթն ու ազդանշանը: Այն սկսվում է երեկոյան ժամը 4-ին, տևում մինչև կեսօնից եր. դրա ընթացքում սպանվում և վիրավորվում են 35 հայեր: Հաջորդ օրը առավոտյան ժամը 10-ից կոտորածը վերսկսվում է ավելի մեծ ուժինությամբ ու դաժանությամբ: Ամենուր իրար հաջորդող կողոպուտներ, իրկիզումներ, բռնություններ ու սպանություններ, և սա տևում է երեք օր ու զիշեր: Հարյուրավոր թուրքեր Բազարնի փողոցում թալանում

<sup>1</sup> Ա - Դ ո. Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում (1905-1906 թթ.) փաստական, վիճակագրական, տեղագրական լրտարանություններով, Երևան, 1907, էջ 7:

<sup>2</sup> Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 10, Երևան, 1999, էջ 7: Այսուհետև՝ հասորը և էջերը կնշվեն տերսում՝ մեջքմանը կից:

<sup>3</sup> Բարվի 222 000 ընդհանուր բնակչության 82 000 -ը մահմեդական տարրն էր, իսկ ռուսները, հայերը և այլազգիները կազմում էին շուրջ 140 000, որից հայերի թիվը կազմում էր 51 000 (տե՛ս նույն տեղում):

<sup>4</sup> Այդ զինվորը դատարանից բանտ էր ուղեկցում թուրք հանցագործ Աշուր բեկին և հարկադրաբար սպանել էր նրան փախուստի փորձ կատարելու պահին (տե՛ս նույն տեղում):

են հայերի խանութները, անցնում Գուրեբնակի, Տորգովի, Նիկոլանսկի, Հայոց փողոցները: Մի խումբ թուրք դեռահասներ ատրճանակներով զինված, այլանդակություններ էին անում հայկական գերեզմանատան մոտակայքի փողոցներում, ապակիներ կոտրատում, զենքով սպառնում, վայրենի աղաղակներ արձակում:

Եվ այդ ամենը կատարվում էր ոուս զինվորների ներկայությամբ, որոնք անտարբեր դիտորդների դեր էին կատարում: Տրվող հարցերի ու միջամտության աղերսանքների նրանց միակ պատասխանն էր՝ մեզ հրամայված չէ խառնվել: Ցուցադրական անտարբերություն էին դրսերում նաև քաղաքի դատախազ Վորոնովը, իշխանությունները, ոստիկանությունը, մինչդեռ, ինչպես վկայում էին ականատեսները, «Արյունալի սարսափները, որ տեղի են ունենում փողոցներում, բարացի կերպով քարացնում են մարդու կամքը և միտքը»<sup>5</sup>: Գրեթե բոլորին թիկունքից էին խփում. «Թուրբերը ետևից էին գնդակահար անում»<sup>6</sup>:

Նավթահանքերը վերածվել էին մարդկային սպանդանոցի: Ականատեսը նկատում է «մի խեղճ, նիհար, փոքրիկ ծերունու, որին գնդակի երեք հարվածներից բացի, սրով կտրատել էին և զլուխը զատել մարմնից»<sup>7</sup>: Իսկ դիակույտերի վրա ընկած էին հղի կանայք՝ արգանդները դաշույնի հարվածով պատռած, երեխան դիակի կողքին. «Ծանոթ պատկեր, որ մենք հարյուրավոր անգամներ կարդացել ենք պատմության արյունու էջերում»<sup>8</sup>:

Սոսկալի այս տեսարանների մասին լուրերը հասնում են Թիֆլիս. մարդ սարսափում էր, և արյունը սառչում երակներում, հարց էր ծագում՝ ո՞վ ստեղծեց այդ դժոխքը, և ինչպէ ս ազատվել դրանից, երբ Բարվի նահանգապետն անձամբ, խրախուսելով թուրքերին, խանգարում, խոշընդոտում էր հայերի ինքնապաշտպանությանը, զինաթափում նրանց: Փաստերը վկայում են, որ այդ ջարդերը իրականացվում էին Բարվի նահանգապետ իշխան Նակաշիձեի, ոստիկանապետ Դեմինսկու, պրիստավկապիտան Սամելլբեկովի, նրա օգնական Սուլթանովի և թաղային վերակացուներ իշխան Միքելաձեի ու Շահթախտինսկու թողտվությամբ և խրախուսմամբ<sup>9</sup>:

Դաշնակցությունը պատճեց նրանցից ումանց՝ մահափորձ կատարելով պրիստավ Սամելլբեկովի դեմ, սպանելով թաղային վերակացու Միքելաձեին և նահանգապետ իշխան Նակաշիձեին՝ «գոյիցինյան ուժինի այդ ստոր, վատթարագույն ներկայացուցին»<sup>10</sup>, որից հետո «...մի անհուն թեթևություն զգաց Կովկասի հայ ժողովուրդը»<sup>11</sup>: Դրաստամատ Կանայանի զիսավորությամբ հայերը վրեժինդիր եղան թափված անմեղ արյան համար:

<sup>5</sup> Ա - Դ ո. նշվ. աշխ., էջ 17:

<sup>6</sup> Նոյն տեղում:

<sup>7</sup> Նոյն տեղում:

<sup>8</sup> Նոյն տեղում:

<sup>9</sup> Երեք օրվա ընթացքում սպանվել էին 205 հայեր, 111 թուրքեր, վիրավորվել էին 121 հայեր, 128 թուրքեր: Սպանվածների մեջ կային կանայք, ծերեր և երեխաներ (տե՛ս նոյն տեղում):

<sup>10</sup> Նոյն տեղում, էջ 6:

<sup>11</sup> Նոյն տեղում, էջ 31:

...Փետրվարի 9-ին Թիֆլիսի ազգային ժողովի դահլիճում Թումանյանի մասնակցությամբ տեղի է ունենում բազմամարդ ժողով՝ կոստրածի տարածումը կանխելու նպատակով։ Ժողովը որոշում է հեռազրել Էջմիածին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկին և նրան խնդրել անհապաղ մեկնել Բաքու, ուր նույն նպատակով գնացել էր Թիֆլիսի շեյխ - ուլ - իսլամը։ Թումանյանին և բժիշկ Ս. Սուրայյանին պատգամավոր են ընտրում՝ գնալու Էջմիածին և իրազեկելու կաթողիկոսին (այդ նպատակով նրանք իրենց հետ էին տանելու այդ ջարդերի անմիջական մի ականատեսի)։ Ուղևորության նպատակն էր Խրիմյան Հայրիկին Բաքու ուղեկցելը, որպեսզի համատեղ ջանքերով նպաստեին հաշտությանը, արյունահեղության շուտափույթ դադարեցմանը։ Նույն օրը երեկոյան Թումանյանը մեկնում է Էջմիածին<sup>12</sup>։

Փետրվարի 10-ին հասնելով Էջմիածին՝ Թումանյանը հիվանդ կաթողիկոսին պատմում է Բաքվի դեպքերի մասին։ «Խեղճ ծերունուն գտանք անկողնում պարկած, – գրում է Թումանյանն իր հանդիպման մասին։ – Երբ որ պատմեցի... բավական է... բավական է... աղաղակեց ու գլուխը ցած զցեց։ Այդ աղաղակը ես չեմ մոռանում։ Այդ կարծես մեր ամրող ազգի, տանջված, ջարդված, հոգնած, ուժասպառ եղած ազգի աղաղակը լինի - բավական է, բավական է, բավական է...» (ԵԼԾ, 10, 8)։ Կաթողիկոսը թեև վատառողջ էր, սակայն համաձայնում է Թումանյանի հանձնախմբի հետ Բաքու մեկնել<sup>13</sup>։

Թումանյանի Էջմիածին հասնելու հաջորդ օրը՝ փետրվարի 11-ին, Թիֆլիսում տեղի է ունենում մի նոր ժողով՝ Վրաստանի և Խմբերթիայի հայոց թեսի առաջնորդ Գարեգին Եպիսկոպոս Սաթունյանցի նախազահությամբ։ Որոշվում է խնդրել կաթողիկոսին մնալ Թիֆլիսում, զյաւորել նույն ժողովում ընտրված 12 հոգանոց հանձնաժողովը, մասնակցել նախօրորդ կազմակերպված հաշտության ու խաղաղության ժողովրդական հանրահավաքին։

Փետրվարի 12-ին Խրիմյանը Թումանյանի ուղեկցությամբ հասնում է Թիֆլիս և հաջորդ օրերին՝ փետրվարի 13-ին և 14-ին, մասնակցում հայերի և քուրքերի խաղաղության ցույցին, ընդ որում, 13-ի ցույցին մասնակցում էին հայերն ու քուրքերը, իսկ հաջորդ օրը՝ հայերն ու վրացիները։ Վանքի բակում, ուր տեղի էր ունենում հանրահավաքը, Խրիմյան Հայրիկն ընդունվում է շերս ծափահարություններով ու կեցցեներով։ Երևալով առաջնորդարանի պատշաճամբում՝ կաթողիկոսը, ոգևորված ժողովրդի խանդակառությունից, մի պահ մոռանում է իր առողջական ծանր վիճակը, շտկում

<sup>12</sup> «Մշակը» տեղյակ էր, որ Թումանյանը հենց այն պատվիրակն է, որ գնացել է Էջմիածին Խրիմյանի մոտ, սակայն դիտավորությամբ նրա անունը չի հայտնում 1905 թ. փետրվարի 11-ի լուրերի բաժնում՝ մեկ անգամ ևս ցուցաբերելով իր չկամությունը Թումանյանի նկատմամբ (տե՛ս «Մշակ», 11. II. 1905)։

<sup>13</sup> «Մշակը» հաղորդում էր, որ պատվիրակները գնացել էին Խրիմյան Հայրիկին Բաքու ուղեկցելու («Մշակ», 11. II. 1905), իսկ Թումանյանը գրում է, որ գնացել էին խնդրելու կաթողիկոսին, որ զա Թիֆլիս։ Հավանաբար, սկզբում որոշվել էր, որ Թումանյանը պետք է Խրիմյանին ուղեկցեր Բաքու, սակայն մեկերկու օր անց այդ որոշումը փոխվել էր։ Նոր որոշման համաձայն կաթողիկոսը պետք է կանգ առներ Թիֆլիսում և մասնակցեր խաղաղության ու հաշտության հանրահավաքներին [ԵԼԾ, 10, 7-8։ Տե՛ս նաև Լ. Կ ար ա պ ե տ յ ա ն. Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը (Դրվագներ), Երևան, 1992, էջ 54]։

կորացած մեջքը և հազիվ լսելի ձայնով հայրաբար օրինում է ու բարեմադթանքներ հղում ներկա բազմությանը: «Թիֆլիսում չտեսնված հանդեսներ էին, – գրում է Թումանյանը, – և կենտրոնը, իհարկե, կաթողիկոսն էր: Այդ հանդեսներում ամենալավ բանը այն էր, որ պոլիցիային խնդրած էր, որ չերևա հայոց վանքի կողմերում, և երկու օրն էլ այդ բազմահազար ժողովուրդը հրաշալի պահեց իրեն, ոչ մի անկարգություն չեղավ» (ԵԼԺ, 10, 8):

Այդ օրերին իշխանությունները գրաքննության միջոցով կանչեցին բոլոր լրագրերի խմբագիրներին և փորձեցին նրանց ստիպել հրապարակավ հայտարարել, որ դաշնակցական կոմիտեներն են արյունահեղության մեղավորն ու պատճառը, հետևաբար, պետք է գրել նրանց դեմ, բայց «իհարկե, ամբողջ մասնութ մերժեց» (ԵԼԺ, 10, 8):

Այդ օրերին Ռուսաստանը Կովկասում կատարում էր իշխանավոր պաշտոնյաների փոփոխություն՝ իրավիճակը վերահսկելի դարձնելու նպատակով: Գոլիցինից հետո նրան ժամանակավոր փոխարինող էր նշանակվել գեներալ Մալայանը: Իսկ նոր փոխարքա 70-ամյա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը Թիֆլիս էր ժամանելու մայիսի 5-ին: Նրա նշանակման մասին լուրը Թիֆլիս էր հասել փետրվարի 18-ին և մամուլում հրապարակվել հաջորդ օրը:

Հավանաբար, փետրվարի 17-ին կամ 18-ին, երբ փոխարքայի նշանակման լուրը դեռ պաշտոնապես չէր հաստատվել և շրջում էր բերներերան, Խրիմյանը կանչում է Թումանյանին՝ գրուցելու այդ թեմայի շուրջ, ու քանի որ բանաստեղծի ու կաթողիկոսի հանդիպումը նախքան այդ լուրի օրաթերթերում հրապարակումն էր, Խրիմյանն ասում է. «...Լսե՞ ես, ան Դաշկովին կուսակալ նշանակեր են... ան մեզ ինչպէ՞ սպիտի կառավարե... 70 տարեկան մարդ է, ալ ինչ իսելք ու եռանդ կունենա կառավարելու, անոր ուղեղը չորացած է հիմա» (ԵԼԺ, 10, 8-9): Թումանյանը, լսելով 85-ամյա կառողիկոսին, պատասխանում է, որ տեղյակ է, բայց ծիծաղը զսպել չի կարողանում. նրան միանում է նաև ինքը՝ հայրապետը:

Խրիմյան Հայրիկի առողջական վիճակը գնալով ավելի է վատանում, և նա չի կարողանում Բաքու գնալ: Այդ պատճառով Բաքու չի մեկնում նաև Թումանյանը: Նրանց փոխարեն Բաքու են մեկնում Էջմիածնից ժամանած Հուսիկ և պիտի կառավարելու, անոր ուղեղը չորացած է հիմա» (ԵԼԺ, 10, 8-9): Թումանյանը, լսելով 85-ամյա կառողիկոսին, պատասխանում է, որ տեղյակ է, բայց ծիծաղը զսպել չի կարողանում. նրան միանում է նաև ինքը՝ հայրապետը:

...Թումանյանն ակտիվորեն մասնակցում էր խաղաղափրական հանրահավաք-ներին: Նրա մեջ տպավորվում է Սուֆթու Ճառը, ըստ որի՝ կոտորածը «շելթանի գործ է», ոչ թե թուրքերի<sup>14</sup> (ԵԼԺ, 10, 8): Չնայած գործադրվող ջանքերին՝ Թումանյանը ներքուստ զգում էր և համոզված էր, որ արհավիրքը շարունակվելու է. «Բայց խոստովանակը լինի, այդ բոլորն ինձ շատ քիչ միսիթարեց: Մարդ երբ որ զիտի ներսը, մեջն ինչ կա, խոսքն ու զրույցը արդեն կորցնում են իրենց արժեքը» (ԵԼԺ, 10, 8):

<sup>14</sup> «Մշակ», 11. II. 1905, 14. II. 1905, 19. II. 1905, Վ. Ա հ ա ր ո ն յ ա ն. Հովհաննես Մարդը և բանաստեղծը, Փարիզ, 1936, էջ 88-91:

<sup>15</sup> Լ. Ե. Անցյալից, Երևան, 1925, էջ 150:

Հայտնի է, որ Թումանյանը օժոված է եղել մեծ կանխազգացմամբ, որը տարածվել է ոչ միայն նրա անձնական կյանքի, այլև քաղաքական դեպքերի, իրադարձությունների վրա: Բացառություն չեն նաև 1905–1906 թթ. հայ-թուրքական ընդհարումները: Այդ մասին հավաստում է Դ. Դեմիրճյանը. «Հիշում եմ նաև ուշազրավ մի բան, որ Թումանյանը դեռ շատ վաղ, քան հայ-թուրքական կոտորածներն էին՝ անհանգիստ էր և մտահոգ... Ներ այն ժամանակ, երբ հայ-թուրքական ընդհարումների մասին ոչ որ չէր մտածում, անգամ չէր կասկածում՝ Թումանյանը մտախոռվ հայացքը դարձում էր դեպի այս խնդիրը»<sup>16</sup>:

Թումանյանն իրավացի էր նաև թուրքերի համար իսաղաղովյան ցուցերի ունեցած նշանակության մասին խորհելիս: Դրանցից և թուրքերի խոստումներից ընդամենն օրեր անց՝ փետրվարի 20-ին, առաջին ընդհարումները սկսվեցին նաև Երևանում<sup>17</sup>, որտեղ ոստիկանապետ Բալուևը դարձյալ անգործության էր մատնված, իսկ նրան հեռացնելու հայերի ու նաև թուրքերի խնդրանքները մերժվեցին նահանգապետի կողմից:

Այս շրջանում՝ 1905 թ. փետրվարի 1-ից մարտի 1-ն ընկած հատվածում, Թումանյանի ազգանունը ընդգրկվում է Թիֆլիսի ժանդարմական վարչության գործակալների հսկողության տակ գտնվող 61 հեղափոխականներից կազմված ցուցակի մեջ: Նրա ազգանունը 39-րդն էր. «Տյունայն Օգանես Տատևոսով. Կрестյանին (Ժոկեյ) - Ճափակ»<sup>18</sup>: Ոստիկանական լրտեսների գեկուցազրերի համաձայն Թումանյանը 1905 թ. փետրվարի 15-ի երեկոյան 8-ն անց 40 րոպեին մտել է Թիֆլիսի Գոլովինսկի պողոտայի թիվ 15 տունը, որտեղ, իբր, ելումուտ էին անում սոցիալ-դեմոկրատները<sup>19</sup>: Այս ամենին դեռ անտեղյակ՝ Թումանյանը շարունակում էր իր ազգանպաստ գործունեությունը: Ապրիլի 3–15-ը նա մասնակցում է Թիֆլիսի Հայկական առաջին համագային համագումարին, որը ներկայացուցիչներ ուներ հայարնակ մոտ 22 տարածաշրջաններից: Նրանց թվում էին Ա. Տիգրանյանը, Լ. Մարգարյանը, Ալ. Մելիք-Աղամյանը, Տ. Հովհաննիսյանը, Ալ. Քալանթարը, Հ. Մատիսյանը, Ալ. Խատիսյանը, Կ.

<sup>16</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում (այսուհետև՝ ԹԺՀ), Երևան, 1969, էջ 31: Էջը կնշվի մեջբերմանը կից:

<sup>17</sup> Երևանում ընդհանրապես առիթ չէր եղել, պարզապես քաղաքի շուկայի մոտ գտնվող թէյարանի դրույթը առջև երկու թուրք միմյանց հետ կռվել էին և ատրանակներով վիրավորել մեկմեկու: Դեպքի վայրին մոտեցող թուրքերը կրակ էին բացել թէյարանից դուրս եկած հայերի վրա (Ա - Դ ռ. նշվ. աշխ., էջ 50):

<sup>18</sup> Թումանյանի անունը հայ, վրաց, հրեա և ոռու հեղափոխականների, սոցիալ-դեմոկրատների, դաշնակցականների անունների կողքին էր (Հ. Արդության, Հ. Տեր-Դավթյան, Ալ. Ահարոնյան, Ս. Խանոյան, Վ. Զափարիձե, Մ. Յիսակայա և ուրիշներ): Նրանց անունների դիմաց նշված էր սոցիալական ծագումը, կուսակցական պատկանելությունը և հետախուզական կեղծանունը: Թումանյանի կեղծանունն էր «Ժոկեյ» («Հեծյալ»): Հաստ Թիֆլիսի նահանգական վարչության 1905 թ. սեպտեմբերի 20-ի գաղտնի գրություններից մեկի, որն ուղարկել էր գործակալ, լրտես Շմակովը, Թումանյանը՝ «Ժոկեյ», միջնորդ էր դաշնակցության Թիֆլիսի և գյուղական կոմիտեների միջև, վարում էր դաշնակցության Շուլավերի կոմիտեի նախագահի պաշտոնը, զիսավորում էր Լոռու շրջանի կազմակերպությունը, Թիֆլիսի դաշնակցության բյուրոյի կազմում էր [Հովհ. Թումանյանի թանգարան, փաստաթղթերի բաժին (այսուհետև՝ ԹԺ, փ. բ.) № 48, 55: Տես և նաև Լ. Կ ա ր ա պ է տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 21]:

<sup>19</sup> ԹԺ, փ. բ., № 56:

Խատիսյանը, Ս. Հարությունյանը, Հ. Մտեվհանյանը, Հ. Քաջազնունին և ուրիշներ: Համագումարի նպատակն էր հայ ժողովրդի կարիքների մասին ընդհանուր խնդրագիր կազմել և ներկայացնել Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին<sup>20</sup> և Մինիստրների խորհրդին: Համագումարում վեճ է ծագում զավառներից եկած ու թիֆլիսարնակ ներկայացրացիշների միջև ձայների բաշխման հարցի շուրջ: Վիճող կողմերին հաշտեցնում է Թումանյանը՝ իր սրամիտ դիրքորոշմամբ<sup>21</sup>: Համագումարից հետո Օրթածալայի այգիներից մեկում կազմակերպված ճաշկերույթին մեծ բանաստեղծք գրում է «Հետներն առած պատզամ ու թուլյօ» երապրոմտը.

Գավառի ձայն... զավառի շահ...

Այսպէս ասին

Ի Միասին

*Մէր Երևան, Գյումրին ու Կարս,*

*Աղա Թիֆլիզ նայեց թարս-թարս,*

– Տեղդ նստիր, կոպիտ զավառ:

...Ու զավառ նոր հասկացա

## Ինչ է իրեն վաղն ըսպառում

Ու, վախցած էս փորձանքից,

Հանեցիսկով իրեն ցանկից (*ԵԼԺ*, 1, Երևան, 1988, 400):

Էքսպրումտում Թումանյանը ծաղրում էր համազումարի ընթացքը և պատզամա-վորների թվի սիսալ ընտրությունը (ԵԼԺ, 1, 399):

...1905 թ. գարնանը հեղափոխական ալիքը մուսաստանից հասել էր Վրաստան: Անհնազանդության ցույցեր, զուղացիական հուզումներ են տեղի ունենում Մինգրելիայի շրջանի Մոլիսորի, Չոզա, Նապիչիսավո, Ակուրի և մի քանի այլ զուղերում: Ապրիլի 1-ին զուղացիները սպանել էին իշխան Դադիանուն: Ոստիկանությունը ճնշել էր խռով ությունը. «Ամբողջ երեք օր շարունակվում էր... զարդը»<sup>22</sup>:

Այս դեպքերի անմիջական արձագանքն էր Թումանյանի «Պարոնների դարը անցավ» բանաստեղծությունը, որն անավարտ է և անմշակ, սակայն ժողովրդի դժողովության ու ապստամբության նկատմամբ բանաստեղծի անթաքրոյց համակրանքի արտահայտությունն է: Եթե չլինեին հայ-թուրքական ընդհարումները, գուցե Թումանյանը թէ՝ իբրև քաղաքացի և թէ՝ իբրև գրող այլ կերպ, թէրևս, ավելի ակտիվ արձագանքեր հեղափոխությանը: Սա վերաբերում է ոչ միայն Թումանյանին, այլև ողջ հայությանը: Իր նամակներից մեկում նույն կարծիքին է Թումանյանը. «Մենք այս ցած ու տմարդի կովով միանգամայն դուրս մնացինք Ռուսաստանի ազատազրական մեծ կովից: Այժմ մեզ մնում է մի առաքինության հնարավորությունը՝ աշխատել վերականգնելու և պահպանելու խաղաղությունը» (ԵԼԺ, 10, 15):

<sup>20</sup> Այդ պահին Վորոնցով-Դաշկովը դեռ Թիֆլիսում չէր. ինչպես ասվեց, նա պիտի ժամաներ մայիսի 5-ին:

<sup>21</sup> Տես Ա. Քաջազնուրի աշխատանքը՝ «Գարուն», 1994, № 5, էջ 57:

<sup>22</sup> Революция 1905-1907 гг. в Грузии. Сборник документов, Тбилиси, 1956, с. 508.

Այդ «առարինության հնարավորությունը» Թումանյանն օգտագործեց լիովին, մանավանդ որ հայ-թուրքական հարաբերությունները սրվեցին նաև Թիֆլիսում, որտեղ անկարգությունները սկսվեցին 1905 թ. հոկտեմբերի 17-ից հետո:

Նոյեմբերի 22-ին Թիֆլիսում արդեն խուճապ է սկսվում: Փակվում են դպրոցները, խանութները, լուս չեն տեսնում թերթերը: Գնդակոծվում է Ներսիսյան դպրոցի շենքը: Համատարած բարբարություն, թալան ու կողոպուտ, բռնություններ ու սպանություններ: Թուրքերը գերում են հայերին, թարգնում, խոշտանգում: Նոյեմբերի 22-30-ը հայուարարվում է ուսամական ընդհանուր դրություն<sup>23</sup>:

Նոյեմբերին Թումանյանը, վերցնելով ընտանիքը, մեկնում է նախ Շուլավեր, ապա՝ Դսեղ<sup>24</sup>: Սա ոչ թե փախուստ էր, այլ վտանգված հայրենակիցներին օգնելու ազնիվ մղում. այդ մասին վկայում է բանաստեղծի գրավոր խոստովանությունը. «Շատ լավ գիտեի, որ խառնակություններ են պատահելու, գիտեի, որ մեր զավառում անիշխանություն և ամեն անկարգություն կարող է լինել, և ես շատ պետք կզամ, բայց պատահածն իմ սպասածից ավելի եղավ» (ԵԼԺ, 10, 14):

1905 թ. նոյեմբերի 27-ին Ալավերդիում հայերը հարձակվում են պղնձահանքերում աշխատող թուրք բանվորների վրա՝ վրեժ լուծելու թուրքերի վայրագությունների, սպանությունների և թալանի համար: Հստ Ֆրանսիայի հյուպատոսարանի քարտուղար Էրերի՝ հայերը Ալավերդու պղնձահանքերի Շահալի-Էլիար գործարանում 16 պարսկահպատակ թուրք էին սպանել, գործարանը թալանել և վերջինս փակվել էր: «Արշալույս» թերթի դեկտեմբերի 9-ի համարում լուս տեսած հայերի համար անբարենպաստ լուրերին անմիջապես արձագանքում է Թումանյանը: Նախ նա ճշտում է, որ ոչ թե 16, այլ 7 թուրք է սպանվել, որ հայերը Դսեղում հանցագործություն կատարողների դեմ բողոքի ցույց են կազմակերպել շրջանի 13 գործերի մասնակցությամբ, որ մասնակիցների միջն ոչ մի տարածայնություն չի եղել, և ոչ ել դրա համար «ստարշինայի» օգնական է սպանվել (ԵԼԺ, 6, Երևան, 1994, 147), ինչպես գրում էր «Վозрожդենիք» թերթում Էրերը<sup>25</sup>: Հնդիակառակը, զյուղացիները որոշել էին գտնել ու պատժել հանցագորներին, վերադարձնել կողոպուտն ու թալանը փողը, գողացված իրերն ու անասունները, ֆրանսիական գործարանի գենքերը: Այդ կողոպուտին մասնակցել էր նաև գործարանում ծառայող մի հոյն: Նրան էլ էին ստիպել գողոնը վերադարձնել: Եվ այդ ամենն արվել է դաշնակցության ձեռքով:

Հետագայում Պետերբուրգում, բանտի օրագրում, Թումանյանը մի քանի անգամ հիշատակում է ֆրանսիական ընկերությանը պատկանող պղնձի գործարանը՝ Շահալի-Էլիարը, ուր նա անձամբ է այցելում Խանքուլաղ սարի վրա կայացած հայերի ու թուրքերի հանրահավաքից հետո: Նա գնում է գործարան, հանդիպում բանվորներին, այցելում նրանց բնակարանները, անձամբ լինում հանքերում: Գործարանի տնօրեն Կարալը զգուշացրել էր 25 կազմական պահակախմբին՝ չմիջամ-

<sup>23</sup> «Արշալույս» (Թիֆլիս), 21. XI. 1905:

<sup>24</sup> Զավակներից Սշիւնն ու Սուշեղը Թիֆլիս են վերադարձնում 1906 թ. փետրվարին, իսկ կինը՝ Օլզան, մյուս երեսաների հետ՝ մարտին: Թումանյանը մնում է Լոռիում մինչև ամառվա վերջը (ԵԼԺ, 10, 446):

<sup>25</sup> «Վозрожդենիք», 7. XII. 1905.

տել Թումանյանի գործերին: Բանվորներից նա զրուցել էր մասնավորապես դսեղջի Անաստասի, Պետրոսի, Եսոնի և վրացի Զանտուրաշվիլու հետ (ԹԺՀ, 241): Թումանյանը գործարանի վրա հարձակվողներից անձամբ է բռնազանձում զողոնք, հանձնում տուժածներին: «Ես բռնազանձեցի ու հանձնեցի տուժածներին՝ պրիստավի միջոցով ես վավերացրեցի համապատասխան ատյանում», – հայտարարում է բանաստեղծը (ԵԼԺ, 8, Երևան, 1999, 346-347):

Հավանաբար, նոյեմբերի 28-ին պղնձահանքերում կատարված սպանությունների առիթով Թումանյանը զրում է «Ղարիբ եղբայրներ» կոչը, որը խաղաղության յուրովի պատզամ էր և բարեկամության հավաստիացում՝ ուղղված պարսկահպատակ թուրքերին, որոնք իրենց ընտանիքն ու հայրենիքը թողած եկել էին Ալավերդի՝ հաց ու ապրուստի միջոցներ վաստակելու: Թումանյանը սրտի ցավով է նկարագրում կատարվածը, ափառում է թափված անմեղ արյան համար, բայց և փորձում է բացարել, որ լցվել է հայերի, հատկապես որոշ «տաքզուիս ու կարճատես ջահելների», համբերության բաժակը, սակայն «դռնախի կարգն ու ադաթը» իմացող լոռեցիները՝ զայրացած ու վշտացած, պատրաստ են պատժել մեղավորներին. «Մենք չենք կարող մեր տներում թալան պահել, իսկ մեր սրտերում՝ թշնամություն: ...Համարձակ և համոզված եղեք, որ մենք – մեր ժողովուրդը – միշտ կանգնած կլինի ձեզ համար... ձեր հեռու թող արած երեխաների ու ընտանիքների համար» (ԵԼԺ, 6, 420):

Այս կոչը Թումանյանը գործարանի բանվորներին է ուղարկում լոռեցիներ Բեծանքեկ Քալանթարյանի և Ավագ Դալլարյանի միջոցով, որոնք նաև պիտի ներողություն խնդրեին Լոռու գյուղացիների անունից: Ստեղծված իրավիճակի մասին Թումանյանն անմիջապես տեղյակ է պահել նաև Կոխրոխանեին, վեհափառ կաթողիկոսին և Թիֆլիսի պարսիկ գլխավոր հյուպատոսին: Ի վերջո, գործարանի ղեկավարությունը՝ ի դեմս Կաբալի և Արնոլդ Կանանի՝ զրավոր շնորհակալություն է հայտնում Թումանյանին՝ արյունահեղությունը դադարեցնելու և գործարանում աշխատանքային խաղաղ մթնոլորտը վերականգնելու համար: Դեկտեմբերի սկզբին Կովկասի փոխարքան անհրաժեշտ է համարում, որ գեներալ Մալամյանը դիմի Հայոց կաթողիկոսին, հարավային Կովկասի Շեյխ-ուլ-խալամին և նրա պաշտոնակատար Մուֆթիին, որպեսզի համատեղ խորհուրդ կազմեն ընդգրկելով 20 հայ, 20 շիա թուրք և 10 սունի թուրք Թիֆլիսի, Գանձակի, Բաքվի, Երևանի նահանգների բոլոր խավերից<sup>26</sup>:

Թումանյանն աշխատում էր զրուցիների ավելի մեծ խմբեր ներգրավել խաղաղաբար գործողությունների մեջ: Շահալի զրուցի Եզոր Ներսիսյանի և Սահակ Մայիլյանի շանքերով կազմվում է ինքնապաշտպանական խումբ՝ Շահալի կայարանի շուրջն ապրող թուրքերի կյանքն ու գույքը հարձակումներից պահպանելու համար: Եվ նոյեմբերի վերջերից Թումանյանը մերք Լոռիում էր, մերք Շուլավերում, որտեղ այդ ժամանակ իր ընտանիքն էր գտնվում:

<sup>26</sup> «Արշալուս», 9. XII. 1905:

Թիֆլիսի ինք նահանգներից ամենաանհանգիստը Բորչալուի զավառն էր: Եվ դա պատահական չէր, որովհետև թուրքերի ամենամեծ կուտակումը հենց այնտեղ էր<sup>27</sup>: Այն սահմանակից էր Գանձակի նահանգի Ղազախ զավառին, ուր հայ-թուրքական ընդհարումները մեծածավալ էին: Ու թեև հայերի թիվը Բորչալուի զավառում հասնում էր 45 000 -ի, սակայն դա չկասեցրեց թուրքական կողոպուտներն ու ավերումներն: Նոյեմբերի 26-ին թուրքերը հարձակվեցին Բաշկեչստ և Ղարաքիս գյուղերի հայ առևտրականների վրա: Բուլեա գյուղից թուրք թալանչիները կրեցին տարան այն ամենը, ինչ հնարավոր էր տանել: Սակայն օրեր անց, նոյեմբերի 30-ին, այդ նույն գյուղի մոտ նրանք ընդհարվեցին գորքերի հետ: Մինչ այդ, նոյեմբերի 27-ին, թուրքերի մի մեծ բազմություն Բորչալուի մի քանի ազդեցիկ ազգակիցների առաջնորդությամբ պաշարեցին զավառի վարչական կենտրոնը՝ Շուլավերը: Իշխանությունները վճռական, կտրուկ միջոցների դիմելու փոխարեն միջնորդի դեր են ստանձնում: Տեսնելով, որ չեն կարող Շուլավերը գրավել, թուրքերը ետ են քաշվում: Սակայն ահն ու սարսափն ամենուր էր՝ նույնիսկ օդում: Վախր հետապնդում էր մարդկանց, ստիպում էր զգոն ու աշալուրջ լինել իրենց հարաբերություններում, շփումներում, առօրյա կյանքում: Սարդիկ անգամ խոսում էին ցածրածայն, զգուշավոր, ամեն քան արփում էր լուր, ծածուկ, զաղտազողի: «Այդպես էր դրությունը Շուլավերում, – հիշում է Ն. Թումանյանը, – երբ լսեցինք հրացանի առաջին ձայնը: Լուր եկավ, որ ներքին Շուլավերից թուրքերը հարձակվում են»<sup>28</sup>:

Այդ ընթացքում Թումանյանը որդիների հետ Դսեղում էր, իսկ կինը՝ Օլգան՝ դուստրերի հետ Շուլավերում: Թումանյանն իր եղբորը՝ Վահանին, ուղարկում է Շուլավեր՝ ընտանիքը Դսեղ տեղափոխելու նպատակով: Շուլավերից մինչև Աղաղա Սարալ (հետագայում՝ Շահումյան) երկաթզծի կայարան 7-8 կիլոմետր էր: Ճանապարհում են զիշերով: Բորչալուի զավառապետը 12 զինված պահակներ է տրամադրում, որպեսզի Թումանյանի ընտանիքին պաշտպանեն հնարավոր հարձակումներից: Քողազերան կայարան հասել էին ուշ զիշերով, որտեղ նրանց սպասում էր Թումանյանը: Նա 15 ձիավորներով առաջնորդում էր այդ քարավանը, մութ ու ցուրտ զիշերով անցնելով Լոռու խորունկ ձորի միջով: Տուն են հասնում միայն լուսարացին:

Խորհրդային շրջանում Թումանյանի ազգային-հասարակական գործունեության այս էջերը ներկայացնելիս շեշտվել է միայն նրա խաղաղության ու հաշտության առաքելությունը՝ բարձրացրած սպիտակ դրոշը: Եվ սա անուրանալի իրողություն է: Սակայն միաժամանակ զաղափարախոսական նկատառումներով միտումնավոր անտեսվել է նրա՝ զինված պայքարին տված նշանակությունը, և այդ ուղղությամբ կատարած նրա գործողությունները: Թումանյանը մեծ հումանիստ էր և բարձրից էր նայում մարդկային ցանկացած հարաբերությունների ու առհասարակ ամեն ինչի և նա ամեննեին էլ այնքան միամիտ չէր, որ չհասկանար, որ եթե թույլ ես ու անզեն, ա-

<sup>27</sup> Պաշտոնական տվյալներով Թիֆլիսի նահանգում թուրք ազգաբնակչության թիվը 113 000-ի էր հասնում, որից Թիֆլիսում և Թիֆլիսի զավառում ապրում էր 20 000, Ախալցիսայի զավառում՝ 35 000, Բորչալուում՝ 38 000 և մնացած զավառներում շուրջ 20 000 թուրք. տե՛ս Ա.-Դ. Նշվ. աշխ., էջ 357:

<sup>28</sup> Ն. Թումանյան. Հովհաննիսյան, Երևան, 1987, էջ 84:

պա ոչ խաղաղություն կլինի, ոչ հաշտություն: Այդ պատճառով հենց Քոլագերան կայարանից կայարանապետի միջոցով նա հեռազիր է ուղարկում Հայոց կաթողիկոսին և նրանից է խնդրում, որպեսզի միջնորդի Լոռիում ռուսական զինված ուժեր տեղակայելու համար: Հեռագրում մասնավորապես ասվում էր. «Խնդրում եմ հաղորդել Վեհափառ Կաթողիկոսին, թե Լոռվա շրջանում հայտնվել է թուրքերի մի ահազին խումբ, որ կողոպտում է, սպանում: Ժողովուրդը աղաջում է անմիջական օգնություն»<sup>29</sup> (ԵԼԾ, 10, 10):

Կաթողիկոսի միջնորդությունը չի ուշանում: Ալեքսանդրապոլի Սևերսկի գնդից Թումանյանի տրամադրության տակ է դրվում զինված մի էսկադրոն, որին Քոլագերան կայարանում դեկտեմբերի 5-ից 6-ը դիմավորում է անձամբ: Ժամանակի պարտադրանքով քրիստոնեական համբերություն, հանդուրժողականություն ու խաղաղամիտություն քարոզող Ամենայն Հայոց Հայրապետը Ամենայն Հայոց Բանաստեղծին օգնում է ռուսական զենքով ու զորքով: Սևերսկի գունդը, որի գլուխն էր անցել Թումանյանը, իր հրետանին ուղղել էր ազերի թաթարների դեմ, միաժամանակ հետապնդել էր տեղի հանցագործ խմբերին, մասնավորապես Զոլցինովի, Սիմոնի և Դավիթ Շավերդովի խմբավորումներին: Այսպէս, Թումանյանը ռուսական զինվորների միջոցով կարողացել էր կազմակերպել և ուժեղացնել հայերի զինված ինքնապաշտպանությունը (ԵԼԾ, 8, 333):

Սակայն Թումանյանը զիտեր, որ բաղձալի խաղաղությանը կարելի էր հասնել փոխվստահությամբ: 1905 թ. ձմռանը Թումանյանը տեղեկություն է ստանում, որ Զալալօղլու հայ հարուստները թուրք ծառաներին բանտարկել են, որ չփախչեն: Թումանյանը եղբոր՝ Վահանի միջոցով գրություն է ուղարկում տեղի դպրոցի տեսուց Սերգի Խանազյանին և կարգադրում տանուտերին ուշադիր լինել թուրքերի նկատմամբ: Այնուհետև անձամբ գնում է Զալալօղլի և նահանգապետ Վասիլի Զոլոտարյովից խնդրած պահակների ուղեկցությամբ թուրք ծառաներին վերադարձնում իրենց զուղերը (ԹԾՁ, 240, 241): Նա հավաքում է տեղի թուրք ազգաբնակչությանը և համոզում, որ կոհիվը վնաս կրերի բոլորին: Թուրք ծառաներին հեռացնելը անվստահություն ու վախ էր առաջացրել Բարանա գյուղի շրջակայրում, որովհետև երբ Թումանյանը պատգամավորներ էր ուղարկել նրանց մոտ առաջարկելով հայերի հետ հանդիպել Կողք գյուղում, բանակցել և թյուրիմացությունները պարզել, նրանք չեին համաձայնվել ու խնդրել էին Թումանյանին անձամբ իր մարդկանցով զալ նշանակված վայրը: Բանաստեղծը հաջորդ օրն իսկ ուղևորվում է հայ և թուրք գյուղերի սահմանում գտնվող Ժամադրավայրը: Առջևում գնում էին Ղազախի բնակչները, ետևից՝ լոռեցիները, իսկ նրանց բոլորին առաջնորդում էր Թումանյանը: Երբ գրեթե հասել էին սահմանին, թուրքերի կողմից կրակոցներ լսվեցին: Թուրքերն իրենք էին հրավիրել հայերին խաղաղության բանակցությունների, և բոլորը տարակուսանքի ու շփության մեջ էին: Հրազենի ձայները կամ հովիվների պատահական կրակոցներ էին, կամ դիտավորություն՝ եկվորների բուն նպատակը պարզելու և հասկանալու նկատառումով:

<sup>29</sup> «Արշալուս», 1. XII. 1905:

Լոռեցիները դեռ ձեր անցել, երբ դազախցիների առաջնորդը կրակոցներից վախեցած հետ է դառնում՝ Թումանյանին թողնելով միայնակ: Ահա թե ինչ է գրում ականատեսներից մեկը. «Բանաստեղծը մնաց մեն-մենակ իր ձիու անդրդվելի: Շոպեն վճռական էր: Բավական էր մեր կողմից մի հրացանաձգություն ի պատասխան թուրքերի, և արդեն կակավեր մի արյունահեղ կոյիկ: Մենք ինդրում էինք նրան ետ դառնալ և ձորք մտնել: Սակայն նա մնաց անհողդող և անվլուկ: Ես ապշել էի: Նա այդ դիրքում իմ աչքին երեաց որպես վեհապանծ մի հսկա» (ԹԺ, 302): Անվերջ թվացող մի քանի րոպէ վտանգին դեմ հանդիման կանգնած Թումանյանը հրահանգ տվեց չվախենալ ու առաջ գալ: Եվ նրա կարգադրությանը ենթարկվում ու առաջանում են նախ լոռեցիները, ապա դազախցիները: «Մեր խումքը անսահման սիրում էր նրան և ձշուությամբ կատարում նրա բոլոր հրամանները» (ԹԺ, 302), – կասեր Թումանյանին ուղեկցող յուրաքանչյուր լոռեցի: Իսկ հաշուության ձգուող Թուրքերը մեծ պատկառանքով էին վերաբերվում բանաստեղծին նրան անվանում «հաշտարար հրեշտակ», «մեծ խաղաղարար»: Թուրք մի ծերունի, որք հիշեցնում է Թումանյանի Սատունցի Դավթի հետ զրուցող թշնամի բանակի ծերունուն, Թումանյանին անվանում է «արյունը ջրով լվացող» մի մարդ, որի «եկած ճամփեն թող վարդ, մանուշակ, շուշան, սմբուլ, ալ ու ալվան ծաղիկներ բուսնեն...» (ԹԺ, 303):

Այնուհետև հայերը թուրքերին հրավիրում են Բարանա՝ հաշուության պայմանագիրը վերջնականապես մշակելու և ստորագրելու: Ու թեև երկու օր Բարանայում քեֆ-ուրախություն էր, Թումանյանը չի կորցնում զգոնությունը: Վերադառնալով հայրենիք նա Դսեղի արևելյան կողմի ձորում՝ Սուրբ Գրիգորի կիսավեր վանքի առաջ, հրավիրում է Լոռու գյուղերի ներկայացուցիչների խորհրդակցական ժողով՝ տարածաշրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով, ընդ որում, թե՝ «կեզու գտնելու», բանակցելու, թե՝ զինված պայքարի ճանապարհով: Զավաքի ընթացքում որոշվում է Լոռին բաժանել ինքնապաշտպանության երեք շրջանի՝ Դսեղի, Ուգունարի և Զալալողլու՝ երեք մեծ գյուղերի անուններով: Բոլորին տալիս է հրահանգներ, իսկ ինքը ստանձնում է Դսեղի շրջանի դեկավարությունը:

Դազախի թուրքերը՝ հայերից վախեցած՝ Թումանյանից օգնություն են խնդրում, որ բարձրանան սարերը: Թումանյանը անմիջապես արձագանքում է նրանց օգնության կանչին: 1906 թ. հունվարի 2-ին նա Դազախի շրջանի քոչվոր թուրքերին Բարանայից պատասխան է ուղարկում՝ հաշուության բանակցություններ սկսելու համաձայնության մասին: Նախքան թուրքերին հանդիպելը, կազմակերպում է զինված հեծյալ գյուղացիների մի խումք: այդ նպատակով նախ գնում է հայկական գյուղեր՝ Սարց, Քարինջ, Լորուտ, Շամուտ, Ահնիձոր և Աթան, որոնք սահմանակից էին թուրքաբնակ վայրերին: Թումանյանը երեք օր շարունակ հորդորում է, բացատրում, նախազգուշացնում... Բոլոր գյուղերից իր խմբում ներգրավում է թե՝ տարիքավոր, թե՝ երիտասարդ տղամարդկանց նրանց թիվը հասցնելով մոտ 200-ի: Զարին-Դաղից (Դմկար Սար) հետո հասնելով Խան Բուլաղ (Խանի Աղբյուր), Թումանյանը ստիպում է «երեք անուղղելի գող հովիվների» սարերից գյուղերը վերադառնալ: Ի դեպ, Խան Բուլաղ ուղևորվելուց առաջ Թումանյանն իր հարյուրավոր զինակիցներին հրավիրել էր տուն: Դուստրը՝ Նվարդը, այդ օրը հիշում է իր բոլոր մանրամասներով: «Մեր տան

պարտեզը, կտուրն ու պատշամբը լիքն էին տեղացի ու եկվոր գյուղացիներով։ Այդ օրվա ճաշի համար հարևաններից սինիներ հավաքեցին, մեծ-մեծ սինիներով ձվածեղ արին ու ճաշ տվին հենց պարտեզում։ Շատերը պարտեզի պարսպի քարերի վրա էին նստել, մի քանիսն էլ ծառերին էին բարձրացել, որ հայրիկի ճառը լսեն ճանապարհ ընկնելուց առաջ»<sup>30</sup>։ Հստ Ն. Թումանյանի հուշերի՝ այդ պահին նրա հորաքույրը՝ Աստղիկը կարում էր սպիտակ և կարմիր (այսինքն՝ հաշտության ու կռվի) դրոշներ, իսկ ըստ ավագ դստեր՝ Աշխենի հավաստիացումների հենց ինքն է կարել սպիտակ դրոշը<sup>31</sup>։ Նաև կարմիր դրոշ բարձրացնելու Թումանյանի որոշումը նույնպես հավաստում է բանաստեղծ-հասարակական գործի հստակ սկզբունքային դիրքորոշումը՝ հանուն խաղաղության միշտ կռվի պատրաստ լինելը։

Նույն այն պահին, երբ բակում հյուրափրում էր հարյուրից ավելի զինվորների, երբ տան մի անկյունում դրոշներ էին կարվում, Թումանյանը գրում էր լոռեցիներին ուղղված իր հոչակավոր Կոչը, և լոռեցիների անունից հանձնարարում մի քանի օրինակ արտագրել Ղազախի թուրքերին առաքելու համար։ Այդ խաղաղության Կոչը հավասարակշիռ էր և զուսպ, արժանապատիվ էր ու հպարտ, բարյացակամ էր և իմաստուն։ Թումանյանը հայտարարում էր, որ իր հայրենակիցները չեն ցանկանում կովել, որովհետև «Եթե ուժեղ ենք, անիրավություն է, եթե թույլ ենք, հիմարություն է... և եթե այդ անկարելի եղավ, մենք ինքներս կզանք նրանց դեմ և անխնա» (ԵԼԺ, 6, 146):

Ի պատախան հայերի կողմից ուղարկված երեք պատգամավորների՝ թուրքերն ուղարկում են երեք համբավարեր և Թումանյանին իր խմբի հետ հրավիրում իրենց մոտ։ Սայսի 15-ին, երբ հայկական բինաներից հեռացել էին գրեթե երկու կիլոմետր, Թումանյանին ընդառաջ են զալիս մոտ 150 ձիավոր, որոնցից քսանը տարիքով կանայք էին։ Նկատելով կանանց և թուրք ծեր դրոշակակրին՝ բանաստեղծն իր հերթին հայ գյուղացուց վերցնում է սպիտակ դրոշը և ընդառաջ զնում։ Թուրքերը թույլ չեն տալիս Թումանյանին ձիուց իջնել և ուղեցում են նրան հասուլ իր համար պատրաստված վրանը։ Մի տարեց թրբուիի Դուրսուն Աղակերան-կրզի անունով, Թումանյանին ողջունում է՝ նրան «աղա» անվանելով։ Բանաստեղծն անմիջապես ուղղում է նրան։ «Ես աղա չեմ»։ Դուրսունը դիմում է նրան՝ «որդի», իսկ նրա ամուսնացած աղջիկը՝ Խալա Իբրահիմ-կրզին, վագելով փաթաթվում է Թումանյանին և նրան հայտարարում եղբայր։ Ականատես Արմենակ Թումանյանը գրում է. «Տեսարանը ազդեցիկ էր. ժողովրդի մեծ մասը ուրախությունից արտավում էր։ Մի քանի րոպէ ոչ մեկը խոսել չէր կարողանում. կարծես բոլորը բարացել էին, իսկ ինքը՝ Թումանյանը և՝ արտավում էր, և՝ ուրախությունից հրճվում» (ԹԺՀ, 577):

Հետաքրքիր մի փաստ ևս. թուրքերի մեջ էր պահնորդական բաժնի մի լրտես ու սաղրիչ՝ Մահմադ Վերիլովը։ Հենց նրա ազդանշանով է հնչում պարեղանակը (փշում է զուրնան), ու մոտ երկու ժամ է տևում պարը՝ 200 հոգու մասնակցությամբ։ Եվ հենց այդ նույն Վերիլովն է հետագայում (1908–1912 թթ.) մատնում Թումանյանին (ԹԺՀ,

<sup>30</sup> Ն. Թումանյան. Աշխենի պահանջանք, էջ 85:

<sup>31</sup> ԹԺԸ, մայր մատյան, № 1096 (Աշխեն Թումանյանի հուշերը):

577), որի պատմած առակի մեջ ցարական իշխանավորները պարզորոշ քաղաքական ենթատերստ են տեսնում և մեղադրում բանաստեղծին: Խոսքը վերաբերում է երեք եղի և զայլի մասին առակին, որը պատմում է Թումանյանը՝ ներկայացնելով, թե ինչպես զայլը, խորամանկությամբ խարելով եղներին, մեկ-մեկ ուսում է նրանց: Չի-մանալով թուրքերեն՝ Թումանյանը թամադայի պարտականություններն է ստանձնում հայախոս թուրք Իսմայիլ Մուստաֆակի թարգմանությամբ:

Մի զիշեր Խան Բուլաղում մնալուց հետո Թումանյանը հաջորդ օրը՝ մայիսի 16-ին, գնում է Զընգլ-Դադ, որտեղից նրան ընդառաջ են զայիս 80 ձիավորներ, իսկ մոտ քառասուն ծեր թուրքեր ծնկաչոր աղոթքով են նրան դիմավորում՝ աստծուց արևիատություն խնդրելով բանաստեղծի համար: Հաջորդ օրը Թումանյանն արդեն Սարի Բուլաղում էր (Դեղին Աղբյուր), որտեղ կրկնվում է նույն ջերմ ընդունելությունը: 80-ամյա թուրք Զալիսան օղի Մուստաֆայի կարգադրությամբ ծեր կանանցից մի քանի-սը նստում են Թումանյանի աջ և ձախ կողմերում, ինչն այն ժամանակ առանձնահատուկ պատվի արտահայտման նշան էր: Մայիսի 18-ին Թումանյանը հայերի բինաներում էր՝ Շալու-Դուզի և Ղարանլուզ-դարի սարերում (Մութ Զոր), այնտեղից էլ Ղարանլուզ-դարի սարի բինաներով գնում է Մալլու շորի պղնձահանքը (Աղավերդու գործարանի բաժանմունքը): Վերջինիս ֆրանսիացի կառավարչի խնդրանքով Թումանյանն իր խմբով մի զիշեր հյուրընկալվում է հանքի վարչությունում: Ի վերջո, մայիսի 20-ին Ղամշկուտ և Խաչի գյուղերով վերադառնում է իր հայրենի գյուղը՝ Դսեղ:

Թումանյանը կարողանում էր «լեզու գտնել» ոչ միայն թուրք ազգայնամոլների, այլև ոուս պաշտոնյաների հետ: Լոռեցիների անվտանգության ապահովման գործին մեծապես նպաստել է Բարչալուի այդ օրերի գավառապետն Ն. Ռեզանովը, որի հետ Թումանյանը ամենասերտ, ջերմ հարաբերությունների մեջ է եղել: Նրա հետ էին հայտնաբերում շրջանի կողոպտիչ-ջարդարարներին և ուղարկում Թիֆլիս՝ Մետեխի բանտ: Բանաստեղծը լոռեցիների անունից թե՝ բանավոր, թե՝ գրավոր ձևով պարբերաբար շնորհակալություն էր հայտնում նրան և նրա օգնական Դ. Բաքրաձեին (ԵԼԺ, 10, 11): Ի դեպ, եթե անհրաժեշտ էր լինում «շատ կարևոր գործով հանդիպել», Թումանյանը ոչ թե ինքն էր գնում, այլ խնդրում էր նրանց զալ իր տուն, որովհետև, ինչպես գրում է՝ «ես ի վիճակի չեմ բացակայելու» (ԵԼԺ, 10, 443): Եվ Թումանյանը Դսեղի իր տանը ընդունում էր նաև գավառի պաշտոնյաների: Իսկ Շուլավերի իր տանը՝ Ն. Ռեզանովի գավառապետ նշանակվելու օրերին՝ նոյեմբերի 25-ին, Թումանյանը հրաժեշտի ճաշկերություն է կազմակերպում գավառապետ Շանշիկի պատվին, որին ներկա է լինում նաև Դ. Բաքրաձեն<sup>32</sup>:

Իր գործողությունների մասին Թումանյանը միշտ տեղյակ է պահել ոուս պաշտոնյաներին: 1906 թ. հունվարի 6-ին նա բացատրում է Ռեզանովին, որ թուրք քոչվորները թյուրիմացությունների պատճառով են իրենց բնակավայրերից հեռացել, և ինքը գնում է թուրքերի հետևից՝ նրանց վերադարձնելու, «որովհետև, գրում է բանաստեղծը, երկու կողմից էլ ժողովուրդը պատրաստվում է: գարնանը կարող է մեծ դժբախտություն պատահել» (ԵԼԺ, 10, 445): Այդ դժբախտությունը ոչ միայն ընդհա-

<sup>32</sup> “Կավազ”, (Թիֆլիս), 25. XI. 1906:

բումներն էին, ավարն ու ավերք, այլև ազգարնակչության՝ վախից սեփական հող ու տնից հեռանալու պատճառով անխուսափելի սովոր ուրվականը: Այս անհանգստությունը մեծանում էր: Թուրքերն իրենց հերթին նույնպես ձգուում էին հաշտության ու խաղաղության, որովհետև նրանց ավանդական քոչի պահին, եթե հայերը վակեին ճանապարհները, ապա դա նրանց համար իսկական աղեստ կդառնար և ճակատագրական հետևանքներ կունենար: Ստեղծված իրավիճակը պայյջունավտանգ էր նաև ոռուսական կողմի համար, և այդ վտանգը շատ լավ էին գիտակցում որոշ ոռուս պաշտոնյաներ, որոնցից էին Ն. Ռեզանովը, Դ. Բարբաձեն, Վ. Զոլոտարյովը և ուրիշներ: Գնդապետ Լեհցու կարգադրությամբ արգելվում է գենք կրելը, սկսվում է կորած գույրերի և անասունների գրանցում ու գնահատում, թեև այդ գործընթացը հաճախ կրում էր ձեռական և ցուցադրական բնույթ<sup>33</sup>: Այնուամենայնիվ, իշխանություններն ուզում էին ցույց տալ, որ պատրաստ են ամեն ինչ անել աղեստի առաջն առնելու համար: Թումանյանը վերահս սարսափի կանխարգելումը համարում էր յուրաքանչյուրի պարտքը և կարևորում էր հատկապես լավ մարդու դերը. «Այսպիսի ժամանակ ամեն մի լավ մարդ մեծ արժեք ունի, ով ուզում է լինի» (ԵԼԺ, 10, 445):

Թումանյանն իրավացի էր. գուցե Բարվում ընդհարումներն այդքան դաժան ու արյունահեղ բնույթ չստանային, եթե Նակաշիձեն չլիներ այդքան չար ու զարհուրելի: Եվ հակառակը, Լոռիում չէր կարող պահպանվել այդքան փիլորուն խաղաղությունը, եթե Ռեզանովն այդքան բարի ու խաղաղասեր անձնավորություն չլիներ: Պաշտոնյան՝ պաշտոնյա, քաղաքականությունը քաղաքականություն, սակայն մարդկային բարությունն ու առողջ, սթափ դատողությունը նույնիսկ իշխանավորին կարող են դարձնել պատմական իրադարձությունների կարևոր դերակատար: Թումանյանը գոհ էր Ռեզանովից, Բարբաձեից, նույնիսկ ուրյադնիկից, սակայն շատ դժգոհ էր պրիստավի անտարբերությունից: Մինչդեռ նրանք բոլորն էլ նույն երկրի, նույն քաղաքականության ներկայացուցիչներն ու իրազործողներն էին, նույն հրամանների կատարողները:

Այս՝ Թումանյանն ազգային խոշոր գործիչ էր, բայց ամենից առաջ նա բանաստեղծ էր, մեծ մարդասեր և միշտ, բոլոր հանգամանքներում իր ուշադրությունը բեկում էր մարդկային գործոնի վրա: Նահանգապետ Վ. Զոլոտարյովի վերաբերմունքը գյուղացիների նկատմամբ նա անվանում է «հայրական», իսկ նրան «արտակից բարեկամ», որը, անշուշտ, չէր հավատա իր մասին տարածված լուրերին, թե, իբր, սպանել է ինչ-որ անտառապահի: 1906 թ. ամռան սկզբին Կովկասի փոխարքայի՝ ոստիկանական գործերի գծով օգնական Շիրինկինը կարգադրել էր Թումանյանին ձերքակալել. բանաստեղծը վստահ էր, որ իր բարեկամ ոռուս պաշտոնյաները, օրինակ, Զոլոտարյովը, ոչ միայն չի հավատա, այլև կծիծառի, երբ «նրա մոտ բերեին պռետին ու ասեին, որ անտառում սպանել է խեղճ անտառապահին՝ կողոպտելու նպատակով» (ԵԼԺ, 10, 448):

Ամեն օր, ամեն ժամ Թումանյանը երես առ երես կանգնում էր մարդկային անքաշտրելի ստորության, նախանձի ու չարության դեմ հանդիման, պայքարում էր

<sup>33</sup> «Արշալուս», 30. I. 1906, 31. II. 1906, 2. II. 1906, 4. II. 1906:

միաժամանակ թէ՝ նրանց և թէ՝ թուրքի, թէ՝ վերջինիս զինած ու ոտքի կանգնեցրած իշխանավորի դեմ. «Այդ մարդիկ իրենց ստորությունների մեջ սահման չեն ձանաչում» (ԵԼԾ, 10, 448): Լրտեսներից, իրենց շուրջ չարություն և ստորություն սփռող մարդկանց հալածանքներից հետապնդվող բանաստեղծի համար դժվար էր վերահսկան այդ մարդկանց արյունահեղության առաջն առնելը, երբ, ինչպես բանաստեղծն է խոստովանում. «Երկու կողմից էլ խովհան մարդիկ են խառնում: Եվ այնպես հեշտ են խառնում, որ զարմանում է մարդ: Եթե դժվար մի բան կա՝ դրա առաջն առնելն է» (ԵԼԾ, 6, 147-148)<sup>34</sup>: Դրա առաջն առնելու, կանխարգելելու համար Թումանյանը բացատրական աշխատանք է կատարում երկու կողմերի հետ հավասարապես՝ ընդհարումները որակելով որպես ամոքալի ու անմիտ կրիվ, մեղադրելով բոլոր նախահարձակներին՝ անկախ ազգային պատկանելությունից: Նրա մեջ խոտում էր ոչ միայն հայի, այլև ընդհանրապես մարդու ճակատագրի նկատմամբ անհանգստությունն ու ցավը: Կոչ անելով Լոռուց փախած թուրքերին վերադառնալ իրենց տները և տեր կանգնել իրենց թողած ունեցվածքին ու խաղաղ և անվախ ապրել՝ Թումանյանը գրում է. «Այս ի՞նչ եք անում, անմիտներ, ի՞նչ եք ուզում մեկդ մյուսից: Մի թէ մեղք չեն ձեր կանայք ու երեխաները, մի թէ ափսոս չէ ձեր արդար աշխատանքը, որ փշացնում եք, մի թէ ամոթ չէ ձեր տղամարդկությանը» (ԵԼԾ, 6, 149): Եվ ամեն անզամ Ղազախի մահմեղականներին դիմելիս, հիշեցնում էր, որ լոռեցիք քաջ են ու կովից չեն վախենում, պարզապես խաղաղություն են ուզում<sup>35</sup>:

Մինչ Թումանյանը ջանք չէր խնայում լոռեցիների համար և ծավալում էր իր ազգանպաստ գործունեությունը, սակայն նրա հայրենակիցների մեջ գտնվում էին այնպիսի մարդիկ, որ շարունակում էին ստահող լուրեր տարածել նրա մասին, շարանենգ մատնությամբ զրադվել: Եվ Թումանյանը ստիպված է լինում մի քանի օրով մեկնել Թիֆլիս, ամենայն հավանականությամբ, իր հանդեպ հարուցված մեղադրանքները հերքելու նպատակով: Նա տեղյակ էր, որ Կովկասի փոխարքայի ոստիկանական գործերի գծով օգնական Շիրինկինը կարգադրել է ձերբակալել իրեն՝ իբրև անտառապահին սպանելու համար:

Ի պատիվ զավարի ոուս պաշտոնյաների՝ պետք է ասել, որ նրանցից ոչ մեկը անվատահություն չէր ցուցաբերում Թումանյանի նկատմամբ: Ավելին, նրան հարգում էին, օգնում և երբեմն էլ նրա օգնությանը դիմում: Զաձախ Բորչալուի քաղաքապետն ու նահանգապետը Թումանյանի միջոցով էին միմյանց հետ կապ պահպանում: Այսպես, երբ Ուկանովը պիտի այցելեր Զալալօղլիում գտնվող Զոլոտարյովին, իսկ դրա համար անհրաժեշտ էր անցնել Բաշկեչերի վրայով, նա օգնություն է խնդրում Թումանյանից՝ «մութ ու արատավոր» անձնավորությունների հնարավոր հարձակումներից խուսափելու համար: Ուշագրավ է, որ նույն օրերին ժանդարմական վարչության գաղտնի գրության մեջ Թումանյանը ներկայացվում է այսպես. «Լոռու շրջանում կարծես զեներալ-գուրենատոր է, նրան է ենթարկվում ամբողջ տեղա-

<sup>34</sup> Տէ՛ս նաև՝ «Արշալույ», 14. I. 1906:

<sup>35</sup> «Արշալույ», 11. II. 1906:

կան դեկապարույթունը և ոստիկանությունը: Նա շրջում է գյուղերում, դատ ու դատաստան տեսնում, տուգանում է գյուղերը մինչև 500 ոուրլի»<sup>36</sup>:

Թեև Թումանյանն իր գործողությունները համաձայնեցնում էր տեղի գավառապետների՝ Կ. Շանշիկի, Ն. Ռեզանովի, Պ. Բարբաձեի, Ժամանակավոր գեներալ-նահանգապետ Վ. Զոլոտարյովի հետ, սակայն ավելի հաճախ գործում էր միանձնյա: Հաշվի առնելով Թումանյանի մեծ հեղինակությունը երկու ժողովուրդների մեջ՝ նրանք հաճախ էին զինված պահակախմբեր դնում բանաստեղծի տրամադրության տակ: Ընկերոջ՝ Փ. Վարդազարյանին ուղղած նամակում Թումանյանը գրում է. «Հերիայքների մեջ կա, թե այսինչ մարդը քնեց, մին էլ աչքը բաց արավ - տեսավ շուրջը կանգնած զորքերը սպասում են իր հրամանին... - մի խոսքով, մարդը հանկարծ թագավոր է դառել: Այդպես էլ ինձ հետ պատահեց» (ԵԼԺ, 10, 14): Նույնն է հավաստում Դ. Դեմիրճյանը: «Թումանյանը պատմում էր, որ իր ձեռքի տակ այնքան ուժ կար, որ կարելի էր ոչ միայն պաշտպանվել, այլև թերևս հարձակվել» (ԹԺՀ, 34): Սակայն Թումանյանը երբեք չէր չարաշահում իր հանդեպ եղած համաժողովրդական հեղինակությունն ու վստահությունը. «Հանկարծ այդքան մեծ պաշտոնի մեջ հայտնվելով և ձեռքիս ունենալով ուժ, ամեն օանք շարունակ գործ էմ դրել մեր գավառներում խաղաղությունը պահելու և կոտորածների առաջն առնելու» (ԵԼԺ, 10, 14):

Դուս պաշտոնյաների կողմից Թումանյանին տրված էր գործողությունների որոշակի ազատություն. նրան թույլատրում էին հրավիրել խորհրդակցություններ, կազմակերպել հանրահավաքներ, օգտվել ոուսական զենքից ու զորքից՝ ազգային մեծ ու փոքր խնդիրներ լուծելու համար: Դրա համար էլ նա կարողանում էր ազատել թուրք պատանդներին և վերադարձնել իրենց գյուղերը, աներկյուղ լինում էր թուրքական վայրերում:

Այս շրջանին է վերաբերում նաև Թումանյանի դաշնակցական լինելու մասին Արշակ Զամայյանի հավաստիացումները: Թումանյանը սերտ կապի մեջ էր դաշնակցության դեկավարության հետ<sup>37</sup>: Հետազայում Թումանյանը խոսառվանել է, որ եթե որևէ կուսակցության հետ կապված է եղել, ապա ոչ թե ծրագրային, այլ զուտ ընկերական կապով, այն էլ «կոնկրետ գործի շուրջը» (ԵԼԺ, 8, 451): 1905–1906 թթ. այդ «կոնկրետ գործը» հայ-թուրքական բնդիարումներն էին և հայերի ինքնապաշտպանությունը: Հետևաբար, 1905 թ. ապրիլին շատ հավանական է Թումանյանի մասնակցությունը Դաշնակցության կովկասյան 1-ին շրջանային ժողովին՝ որպես Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ: Նկատենք, որ Թումանյանը դաշնակցականների զիտուրյամբ էր պատժում այն հայ կալվածատերերին, որոնք, օգտվելով խառնակ ժամանակներից, փորձում էին պղտոր ջրում ձուկ որսալ: Այսպես, կալվածատեր Պավել Զախարի Բաժրեռլի-Մելիքովը Շամուտի Ճանապարհով անցնող թուրք քոչվորներից մի քանի տասնյակ ոչխար էր գողացել: Թումանյանը մտահոգվում է, որ

<sup>36</sup> ԹԺ, փ. Բ., № 51:

<sup>37</sup> Ալավերդու պղնձահանքերում տեղի ունեցած բնդիարումների օրերին Թումանյանը հեռագիր է ուղարկել դաշնակցության բյուրոյին, որտեղ, հավանաբար, աջակցություն է խնդրել մեղավորներին պատժելու համար: Հեռագրի տեքստը, սակայն, չի պահպանվել (տե՛ս «Արշակուս», 14. I. 1906):

թուրքերը կասեն՝ «...հայերը մեզ թալանեցին և կակսվի...» (ԵԼԺ, 10, 449) ընդամենը մի «հիդալգոյի», այդ չակերտավոր ասպետի ոչ ասպետական, ոչ ազնվական արարքի պատճառով։ Բայց բանի որ Բաժրեռուկ-Մելիքովը գործել էր ուստական Կուրտիկ կալվածքում տեղակայված կազակների աջակցությամբ, Թումանյանը խնդրում է Ռեզանովի թույլտվությունը՝ պատժելու նաև ուստակակներին, որոնք հայտնի էին իրենց անմարդկային ու անօրինական արարքներով։ Թումանյանն իր վրդովմունքն է հայտնում Կուրտիկում «ինքնազուի ծառեր կտրելու և տավարը հանդն անելու համար» (ԵԼԺ, 10, 449), պահանջում է բոնազանձել թալանը և վերադարձնել տերերին, իսկ Մելիքովին հասկացնել, որ «զավառապետի հետ ծանոթ լինելը կամ այն հանգամանքը, որ նրա մոտ ապրում են օֆիցերներ և կազակներ, նրան իրավունք չեն տալիս այդպիսի «դաշտական» սիրազդրություններ կատարելու» (ԵԼԺ, 10, 450):

Թումանյանը համոզված էր, որ եթե ուստաները օգնում են որևէ հայի թալանել, ապա դա իսկական «արջի ծառայություն է», սադրանք է հենց հայերի դեմ, ինչը ոչ մի լավ բանի չի հանգեցնի։ Բորչալուի զավառապետ Ռեզանովը, իրոք, արդարամիտ, խաղաղասեր բնավորություն ունեցող մարդ էր և գործում էր Թումանյանի հետ, ինչը դուր չէր զայխ Սադի (Հասան) և Հուսեին բեզ Եղիզարով Եղբայրներին, որոնք զավառում կատարվող գրեթե բոլոր հանցագործությունների «կնքահայրերն» ու կազմակերպիչներն էին։ Նրանց հովանավորում էին ուստա բարձրաստիճան պաշտոնաները։ Ն. Ռեզանովը պատժում է Եղբայրներից մեկին՝ Հուսեին բեզ Եղիզարովին, բայց համաձայնվում է մյուս Եղբայրը՝ Հասան բեզ Եղիզարովին ընտրել ազնվականների պարագուի։ Ռեզանովը գիտեր, որ եթե Եղիզարով Եղբայրներից գեթ մեկին չպաշտպաներ, ապա կգրկվեր իր պաշտոնից։ Այդ պատճառով նա Թումանյանին և Շուլավերի տանուտեր Վահրանգ Մեհրաբյանին խնդրում է ստորագրել Եղիզարովին ազնվականների պարագուի ընտրելու միջնորդությունը։ Սակայն, ինչպես հավաստում են ժամանակի թերթերը, «Մեր զավարի հայ-թուրքական հաշտարար կոմիսիայի անդամներ պ.պ. Հ. Թումանյանը և Վ. Մեհրաբյանը հրաժարվեցին մասնակցել այդ կոմիսիային»<sup>38</sup>։

«Մշակին» ուղղված Բորչալուի գյուղացիների նամակում Ն. Ռեզանովի առաջին քայլը՝ Եղիզարով Եղբայրներից մեկին պատժելը, իրախուսվում էր, սակայն դատապարտվում էր երկրորդ քայլը՝ մյուս Եղբայրը ազնվականների պարագուի հռչակելը։ 1906 թ. հունիսի 4-ին Օձուն գյուղում տեղի է ունենում է Լոռու 40 գյուղերի ներկայացների խորհուրդ՝ կալվածատերերի և գյուղացիների մեջ հողային փոխադարձ հարաբերությունները կանոնակարգելու գործին նպաստելու ու այդ նպատակով փոխարքային ուղղվելիք հեռագիր նախապատրաստելու համար։ Խորհուրդը հեռագրով բողոքում էր Հասան բեզ Եղիզարովի դեմ և պահանջում էր նրան ազնվականների պարագուի ընտրելու փոխարեն դատի ենթարկել՝ որպես ազգամիջյան կոիվների հիմնական հրահրող, թալանի, սպանությունների, հանցագործությունների, ամեն տեսակ վայրագությունների կազմակերպիչ ու մասնակից։ Հեռագիրը ստորագրել

<sup>38</sup> Տե՛ս օրինակ՝ «Մշակ», 30. VII. 1906: «Կոմիսիա» է անվանվում Եղիզարովի անմեղության մասին քննիչ Մասալովի «Եղբակացությունը» հաստատելը։

Էին 15 լիազորված անձինք<sup>39</sup>: Անշուշտ, Թումանյանն էր Օձունի այս ժողովի նախաձեռնողներից և հեռագիրը կազմողներից ու ստորագրողներից մեկը:

1906 թ. օգոստոսի սկզբին Հուսեին բեզ Եղիզարովը Ղրզ-հաջու գոտիից թույցիկներ է տարածում սարերում, որպեսզի քոչվոր թուրքերը «վերադառնան ու պատրաստվեն» կովի: «Նա զավարի «տերն է», ազնվականության պարագլուխը և իբրև այդպիսին, օգովելով իր ազդեցությունից, անընդհատ տարածում է պրովոկացիայի թույնը»<sup>40</sup>, – գրում էր Ժամանակի մամուլը:

Օձունի ժողովի հեռագրին ի պատասխան՝ փոխարքան զավառ է ուղարկում «առանձին հանձնարարությունների պաշտոնյա», քննիչ Մասալովին, որը բողոքողներին հանդիպելու և լսելու փոխարեն իշխանում է Եղիզարովի ու նրա բարեկամների տանը, վայելում նրանց սիրալիր հյուրընկալությունը, հետևաբար, դժվար չէ պատկերացնել, թե այդ «անաշառ քննության» արդյունքում ինչպիսի գեկուցում է հասնում Թիֆլիս, փոխարքային: Արդյունքում՝ Բորչարուում խաղաղությանը որոշակի նպաստ բերած, Թումանյանի համախոհ ու բարեկամ զավառապետ Ն. Ռեզանովին հեռացնում են նրան փոխարինելով Գորիի զավառապետ Պ. Լեռնտելով:

Թումանյանը՝ վրդովված ու անհանգստացած, անում է իրենից կախված ամենին՝ Ռեզանովին պաշտպանելու և իր պաշտոնում վերականգնելու համար: Նա կազմակերպում է զավարի տարբեր գոտիերից ընտրված պատգամավորություն՝ բաղկացած 50 հոգուց, այդ թվում հայ, վրացի և ռուս ներկայացուցիչներից: Նրանք պետք է օգոստոսի 12-ին խնդրագիր ներկայացնեին փոխարքային՝ Ռեզանովին իր պաշտոնում թողնելու նպատակով: Թումանյանը նամակով դիմում է փոխարքայությանը կից հայ-թուրքական խորհրդի անդամներ Ալ. Քալանթարին, Ալ. Խատիսյանին և Բարեգործական ընկերության նախագահ Ս. Հարությունյանին, որպեսզի նրանք օգնեն պատգամավորությանը փոխարքային բացատրելու և հասկացնելու, որ հարգված զավառապետի հեռացումը կարող է պատճառ դառնալ նոր անհրավորյունների: Արձագանքելով Թումանյանի այդ խնդրանքին, Ալ. Քալանթարը գրում է «Ինքնապաշտպանության խնդիրը» հոդվածը<sup>41</sup>, որով հիշեցնում է հայերի՝ յնքնապաշտպանությանը դիմելու պատճառների մասին և հայերի խնդրանքը փոխարքային՝ զինված պահակախմբեր կազմելու անհրաժեշտության մասին: «Զանգ» օրաթերթը, տպագրելով Շուլավերի իր թթվակցի «Վերջին տեղեկություններ» վերնագրով նյութը, նույնպես պաշտպանության տակ է առնում Ռեզանովին: «Համոզունք կա ազգաբնակչության մեջ... Այդ մարդը համեմատաբար շիտակ ուղղության տեր էր... բարյացակամ աշքով նայելով հայ և թուրք աշխատավոր ժողովրդի վրա: Նա հակառակ էր մասնավորապես տիրահոչակ Եղիզարովներին... Շոպեն շատ ավելի լուրջ է, վտանգավոր: Մեր շուրջը դեռ լսվում է ատամների մոլեզին կրծոց, խուժանային բարբարոսության խավար... մի վայրկյան անգամ ինքնապաշտպանության անհրաժեշտությունը չէ վերանում մեր բազմատանջ ժողովրդի գլխից... Սակայն գիշատիչ դե-

<sup>39</sup> «Ալիք» (Թիֆլիս), 19. VII. 1906:

<sup>40</sup> «Ալիք», 6. VIII. 1906:

<sup>41</sup> «Մշակ», 12. VIII. 1906:

կավարները իրենց կողմն ունենալով բոլոր սրիկա, խույզան տարրերը, միշտ ավելի ու ավելի վառվում են վրեժինդրությամբ<sup>42</sup>,՝ ասվում է «թերթի» խմբագրական թղթակցության մեջ: Թումանյանը զգուշացնում էր, որ եթե բարձրաստիճան իշխանությունը չարձագանքի պատզամավորության դիմումներին, ժողովուրդը իսպակորցնի իր հավատը նրա նկատմամբ և կհամոզվի, որ կառավարության ջերմ ցանկությունն է՝ ջարդ ու ավերակ տեսնել զավառում<sup>43</sup>:

Ավադ, Թումանյանի բոլոր ջանքերը գուր անցան, և փոխարքայի որոշումն այդպես էլ մնաց անփոփոխ: Թումանյանը չէր փատվում, շարունակում էր ջանք գործադրել, յեն ներքուստ զգում էր, որ հաջողության չի հասնելու: Նոյն այն նամակում, որով խնդրում էր օգնել պատզամավորությանը, Թումանյանը համոզված գրում էր. «Հանցավոր տարրը բարձրացավ զավառում, պատժող և զապող ձեռքը հեռացվում է մեջտեղից» (ԵԼԺ, 10, 19):

Ստեղծված իրավիճակում Թումանյանը նոր խնդիր ուներ. բարեկամական նոյնպիսի հարաբերություններ հաստատել և համագործակցել նոր զավառապետի՝ Պոտոր Ստեփանի Լեռնտելի հետ: Ընդ որում, օգոստոսի 11-ին, երբ Լեռնտելը դեռ Գորիի զավառապետն էր, նրա վրա ոռումք էր նետվել, սակայն սպանվել էր ուղեկցող «ստրաժնիկը»<sup>44</sup>: Դա նշանակում էր, որ Լեռնտելի պաշտոնավարությունից Գորիում դժգոհ էին եղել: Ու թեև վերջինս Ռեզանովի արժանավոր հետևորդը չդարձավ, Թումանյանը նոր զավառապետի ժամանելու առաջին իսկ օրերից հանդիպում է նրան, ներկայացնում Ղազախի շրջանում ստեղծված անմիտար վիճակը և փորձում աշակցություն ստանալ:

Հայտնի ճշմարտություն է, որ ազգամիջյան բախումների, անցումային կամ հեղափոխական ժամանակաշրջաններում սովորաբար, երբ կյանքը դուրս է զայիս իր բնական հունից, մեծ չափով աշխուժանում են հանցագործ, արկածախնդիր տարրերն ու ամեն տեսակի թափթփուկները՝ գողերը, թալանչիները, սաղրիչները: Նրանց համար գոյություն չունի ոչ մի սրբություն, նրանք իրենց նպատակին հասնելու համար առանց վարանելու շահարկում են ազգային խնդիրները, ժողովրդի շահերը: «Այդ խառը ժամանակներում,՝ վկայում է Թումանյանը,՝ գործել սկսեցին բոլոր մութուժերը, բոլոր հանցագործները: Ինչ-որ Սիմոն մորթեց երկու վաշխառու հրեաների, ինչը ես բացահայտեցի, Քոլագերան կայարանում մորթեցին երկու թաթարների, ինչը ես բացահայտեցի: ... Կայարանը թալանել էր Զուրինովի հայտնի բանդան, Շահվերդովի բանդան» (ԵԼԺ, 8, 346-347): Զրի երես ելած մարդկային տականքի դեմ ամեն օր համառորեն կորիվ էր տալիս Թումանյանը: «Բորչալուի զավառը հայտնի է սպանություններով, թալանով, ավազակությամբ, գողությամբ: ... Ժողովուրդը չի ուզում

<sup>42</sup> «Զանգ» (Թիֆլիս), 12. VIII. 1906:

<sup>43</sup> Նոյն տեղում:

<sup>44</sup> «Զանգ», 22. VIII. 1906: Լեռնտելին իր պաշտոնից անսպասելի հեռացրել էին նոյն՝ 1906 թվի նոյեմբերին: Նրա օրոք զավառում ստեղծվում է «զաղտնի ոստիկանական բաժանմունք»: Հասն «Մշակ» նա այնպիսի պաշտոնյաներից էր, որոնք աշխատում են «... տեր լինել զավադին, բայց ոչ այն մտքով, որ օգուտ բերեն..., այլ միայն անիրավ ու զայթակղեցուցիչ ուկիներ դիզելու նպատակով» («Մշակ», 18. XI. 1906):

լրել, ժողովուրդը դատավորներ է պահանջում, պայքարողներ է պահանջում հափշտակիչների և ավագակների դեմ: Գողության ու ավագակության հետևանքով քայրայվել է մեր զավառը...», – գրում է նա (*ԵԼԺ*, 10, 453): *Տեսնելով*, որ իր ձայնը տեղ չի հասնում, Թումանյանն ինքն է անցնում գործի՝ հայտարարելով. «Մենք թույլ չենք տա որևէ զյուղում գող ու ավագակ թաքցնել» (*ԵԼԺ*, 10, 453):

Ավելի հաճախակի էին դրամաշորթության դեպքերը: Ումն Մուշեղ, Սուրեն և Սամսոն, շահարկելով կուսակցության անունը, փորձում են խարեւությամբ ու խարդախությամբ զյուղացիներից գումարներ ստանալ: «Սակայն, – ասում է Թումանյանը, – զյուղի բնակիչների և պատվավոր անձանց ժողովում ես արժանի հակահարված տվեցի այդ թալանչիներին և կոչ արեցի չենթարկվել հակաօրինական այդ պահանջներին» (*ԵԼԺ*, 8, 333):

Բանտի իր օրագրում Թումանյանը խոստովանում է. «Ես բացահայտ գործել եմ սադրիչների դեմ, կրքեր բորբոքողների դեմ, ովքեր զրադշում էին թալանով, շորթումով» (*ԵԼԺ* 8, 332): Այդ օրագրի զրառումներում Թումանյանը խոստովանում է, որ անձամբ բացահայտել է երկու սպանություն, մեկ զողություն և փորձել է դադարեցնել երկու ավագակախմբերի գործունեությունը: Հավանաբար, Թումանյանը փորձել է գտնել նաև եղբորը սպանելուց հետո Ղազախի թաթարների մոտ ապաստանած Հարություն Շահվերդովին: Թումանյանը խստորեն դատապարտել է Արորի զյուղի բնակիչների գողությունը հարևան զյուղերից (*ԵԼԺ*, 10, 453): Երևույթը վերացնելու նպատակով բանաստեղծն անձամբ հանդիպել է զավառապետին (*ԵԼԺ*, 10, 19):

Այս շրջանում Թումանյանի նման զրադշումներ հնարավորություն չեր տալիս բանաստեղծին ստեղծագործելու, զրադշու գրական գործունեությամբ: Ու եթե նա գրիչ էր վերցնում, ապա միմիայն հրապարակախոսական հոդվածներ կամ կոչեր գրելու նպատակով, այսինքն՝ գործում էր որպես հրապարակախոս, ազգի շահերով, ճակատագրական հարցերով մտահոգ լրագրող: 1906 թ. օգոստոսի 6-ին տպագրվում է Թումանյանի «Նոր պրովկացիա» անտորազիր հոդվածը, որով նա ահազանգում է յայլաներից վերադարձող թուրք ազգաբնակչության կողմից «խորհրդավոր պատրաստություններ տեսնելու» մասին, ընդգծում ուրազործ բեկերի և իշխանության համագործակցությունը ու փորձում բարձրացնել ինչպես թուրք, այնպես էլ հայ մարդու ինքնազիտակցությունը, միանալ և պայքարել բոնության ու հարստահարության դեմ<sup>45</sup>:

Հասկանալի է՝ Թումանյանը, լինելով ոստիկանական հսկողության տակ, չեր կարող ստորագրել այսպիսի բովանդակությամբ հոդվածներ: Սակայն փաստ է, որ 1905–1906 թթ. Թումանյանը «Արշալույսից» բացի կապ է պահպանել Թիֆլիսի «Հառաջ», «Ալիք», «Զանգ» թերթերի հետ, որոնք միմյանց ետևից հրատարակվելով և արգելվելով, իրենց գործունեությունը դադարեցնելով, փաստորեն, հանդիսանում էն մեկը մյուսի շարունակությունը: «Հառաջի» հրատարակության ազդում «Մոտիկ աշ-

<sup>45</sup> «Ալիք», 6. VIII. 1906: Այս հոդվածի՝ Թումանյանի գրչին պատկանելու մասին հիմնավորումը տե՛ս *L.* Կ ա թ ա պ է տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 68-70:

խատակիցների» ցանկում կա նաև Թումանյանի ազգանունը<sup>46</sup>: Այդ նույն պատճառով Թումանյանի գործունեության մասին ակնարկներն արվում էին առանց նրա անունը հիշատակելու, ինչպես, օրինակ, վարվել է «Ծոպեի լրջությունը» առաջնորդողի հեղինակը. «Կան խաղաղության և համերաշխության հանդիսավոր թափորներ Ղազախի կողմերում, ուր մեր ինտելիգենտ ընկերները մի ազնիվ ու սքանչելի եռանդ են թափում, ամրապնդում երկու ժողովուրդների խզված կապերը»<sup>47</sup>: Այդ «սքանչելի եռանդ թափողը», իհարկե, Թումանյանն էր: Միայն «Արշալույսի» Շուլավերի թղթակից Գր. Բալասանյանի հաղորդման մեջ ենք հանդիպում Թումանյանի անունը՝ «սպիտակ դրոշով լոռեցիների հետ Ղազախ գնախա»<sup>48</sup>:

...Փոխարքա Վորոնցով-Դաշկովից ունեցած սպասելիքները չեն արդարանում: 1906 թ. մայիսի 12-16-ը հայերի կոտորածներ են սկսվում Հին Նախիջևանում, օգոստոսին դրանք վերսկսվում են Բաքվում, Գանձակում, Թիֆլիսում, Ղազախ-Բորչալուի գավառում և այլուր: Տեղերում հայտնվում են կազակների խմբեր, որոնք, իբր, ուղղում են դադարեցնել ազգամիջյան բախումները, սակայն իրականում միայն վնասում են<sup>49</sup>:

Թումանյանն անում էր այն, ինչ կարողանում էր, և այնքան, որքան հնարավոր էր: Օգտագործելով իր կապերն ու գրեթե միանձնյա իշխանությունը և անառարկելի հեղինակությունը Լոռու շրջանում՝ Թումանյանը փորձում է լուծել լոռեցիների համար կենսական մի խնդիր: Նա դիմում է իշխան Լսինին, որը կառուցել էր Շահալի-Դսեղ խճուղին, և խնդրում է նոր ձանապարհ կառուցել՝ Քոլազերան կայարանից դեպի Դերեկ գետի աջափնյա գյուղերը: Կազմակերպելով թե գյուղացիներին, թե կալվածատերերին՝ Թումանյանը նրանց բոլորի անունից գրում է իշխանին. «Մեր գյուղացիները Ձեզ անձամբ խնդրագիր կներկայացնեն, և շատ եմ խնդրում, եթե կարելի է, հավերժացրեք Ձեր անունը շինելով և այդ երկրամասի համար խիստ կարևոր ձանապարհը: Ինձ հաստատապես հայտնի է, որ բոլոր կալվածատերերը պատրաստ են ամեն կերպ աշակելու Ձեզ այդ լավ գործում» (ԵԼԺ, 10, 454):

Մինչ Թումանյանը գրադաւած էր խաղաղասիրական գործունեությամբ, «Շմակով», հետազոտում «Մանասյանց Ստալնոյ» կեղծանվան տակ թաքնված զաղունի գործակալը, որը, ամենայն հավանականությամբ, մեր կողմից արդեն հիշատակված Հարություն (գյուղացիների համար Շահբաղ) Շահվերդովն էր, Թումանյանին սկսում է հետապնդել և վայրիվեր տեղեկություններ է հաղորդում Թիֆլիսի ժանդարմական վարչություն: Պահնորդական բաժնի գեկուցազրերում Թումանյանը ներկայացվում է որպես միջնորդ դաշնակցության գյուղական կոմիտեների միջն, մերթ, իբր, դաշնակցությունը Թումանյանին դատի է տվել ինչ-որ գումար՝ 10 000 ռուբլի, վատնելու համար, մերթ, իբր, նա կաշառել է շրջանի դեկավարներին, մերթ Ավ. Խսահակյանի հետ

<sup>46</sup> «Մուրճ», 1905, թիվ 10:

<sup>47</sup> «Զանգ», 12. VIII. 1906:

<sup>48</sup> «Արշալույս», 12. II. 1906:

<sup>49</sup> Լ. ե. նշվ. աշխ., էջ 188:

մասնակցել է ահարեկչական խմբակի գործողություններին, մերք իբրև թէ նրա հրամանով Քոլագերան կայարանում սպանվել է երեք թուրք և այն, և այլն<sup>50</sup>:

Սակայն Թումանյանն անտեսում էր իրեն հետապնդողներին և շարունակում իր առաքելությունը:

Շատերն էին դիմում Թումանյանին, նրանից էին օգնություն խնդրում, նաև տեղեկատվություն՝ կատարված յուրաքանչյուր դեպքի մասին, որովհետև նա էր բոլոր իրադարձությունների կենտրոնում և ամենից իրազեկը: Այսպես, 1906 թ. դեկտեմբերի 16-ին նա Երևանից ստանում է Հովհ. Տեր-Մարտիրոսյանի նամակը: Նամակագիրը Սիմոն Զավարյանի հանձնարարությամբ վիճակագրական և ժամանակագրական մանրամասն տեղեկություններ էր խնդրում Բորչալուի գավառում հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հայերի վրա կատարված հարձակումների, կրած վնասների չափի, մարդկային զոհերի մասին, թէ որքանով «հայերը նպաստել են ընդհարմանը, տնտեսական դրությունը ո՞ր չափով դեր է խաղացել այդ ընդհարման մեջ. հայերի բարվոր վիճակը ինչպէ՞ս է ազդել թուրքերի վրա, և թէ բեկերն ու կառավարչական պաշտոնյանները ո՞ր չափով են նպաստել այդ ընդհարմանը»<sup>51</sup>:

Թումանյանին անհանգստացնում է նաև համագույղացիների հացի պաշարների խնդիրը: 1905 թ. ձմռանը նա իր եղբորը՝ Վահան Թումանյանին ուղարկում է Ալեքսանդրապոլ Ավ. Խահակյանի մոտ, որ օգնի Դսեղի գյուղացիների համար այլուր հայրայթել: Այլուրը պիտի գնեին և գյուղ հասցնեին Դսեղում այդ նպատակով ընտրված մարդիկ՝ Զումշուղը, Նիկոլը, Ենոքը, Սումբաթը և Երվանդը<sup>52</sup>: Խահակյանը գնում է Վարտիկովների մոտ, պայմանավորվում այլուրի և նրա տեղակիուման գնի մասին: Արդյունքում երկու վագոն այլուր է հասնում Դսեղ, ընդ որում դրա մի մասն ունեորներին վաճառում են, «իսկ չքավոր ընտանիքներին ձրի բաժանեցին»<sup>53</sup> (ԹԺ, 243):

1905–1906 թթ. իր ծավալած ազգային գործունեությանը գնահատել է նաև ինքը՝ բանաստեղծը. «Եվ այսօր ես այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս զազանական կոտորածից» (ԵԼԾ, 10, 14-15): Թումանյանն այդ արդյունքին հասել էր և՝ հաշտության սպիտակ դրոշով, և՝ ոռուսական գենք ու գորքով, որը նա կարողացել էր օգտագործել հայերի զինված ինքնապաշտպանությունը կազմակերպելու և ուժեղացնելու նպատակով: Առանց չափազանցության և առանց Թումանյանի դերի գերազնահատման վստահ կարելի է ասել, որ Թումանյանի շնորհիվ Լոռիում և Բորչալուի շրջանում զինված ընդհարումների փոխարեն տեղի ունեցան հայերի և թուրքերի զինված, բայց անարյուն հանդիպումներ, փրկվեցին հազարավոր կյանքեր:

<sup>50</sup> ԹԺ, փ. թ. 51: Տե՛ս նաև Լ. Կ ա ր ա պ է տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 22:

<sup>51</sup> Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆ., գ. 1156:

<sup>52</sup> ԹԺ, 243:

<sup>53</sup> Ն. Թ ո ւ մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 87:

Թումանյանի համար հեշտ չէր խաղաղության սպիտակ դրոշը բռնել, նաև թուրքերի կյանքն ու ունեցվածքը փրկելը: Այո, հեշտ չէր ողջագուրվել թշնամու հետ: «Եվ մենք, որպես աստվածային մի ծանր պատիճ, ստիպված ենք տանելու, համրութելու, եղբայր անվանելու: ...Ես միանգամայն խորտակված եմ: Այս մասին մտածելիս հոգնում եմ իսկույն» (ԵԼԺ, 10, 7), – դառնորեն խոստովանում է Թումանյանը և ավելացնում, թե ինչպես է մեր արյունոտ անցյալը, մեր տանջապահ ներկան, մեր մուժ, անլույս ու անհույս ապագան ծանր քարերի նման «պառկում» սրտին. «Ակսոսում եմ մեզ» (ԵԼԺ, 10, 7):

Այդ դժոխային շրջանում, երբ ասպարեզ էր բացվել մարդու վայրենի բնագրների համար, և դրանք երեան էին եկել ահոելի շափերով, Թումանյանը համոզված էր, որ այդ նույն օրերին «Հարկավ, լավ հոգիներն ել իրենց ամրող փայլով հրապարակ են իջել» (ԵԼԺ, 10, 22): Թումանյանը հենց այդ լավ հոգին էր, որ նոյնիսկ վատի կողքին տեսնում էր լավը, վատի մեջ էլ փնտրում էր լավը և սիրում էր այդ լավը: 1912 թ. Պետրովուրդի բանտում գտնվելիս իր օրագրում, անհյուրընկալ պատերի ներքո՝ Սիրին ու աքտորն աչքի առաջ ունենալով, դատարանում երես առ երես հանդիպած իր «հայրենակից» լրտեսների ու մատնիչների, մարդու վատ տեսակի մասին է Թումանյանը գրում:

*Ահա ինչու էս աշխարհում  
Խաղաղ է միշտ իմ հոգին:  
Պաշտպանում է նա իր խորքում,  
Սիրում է ողջ և ամենքին (ԵԼԺ, 1, 260):*

Երկու տարի շարունակող հայ-թուրքական բնդիարումները տարբեր գավառների հայ ու նաև թուրք բնակչությանը մատնեցին համատարած թշվառության: Ավերվեցին 252 գյուղեր և 7 քաղաքներ, սովորվականը սկսեց շրջել գյուղից գյուղ, բազմացան ավազակախմբերն ու ավազակային գործողությունները: Հազարավոր անմեղ զոհերի թափված արյունը Կովկասը դարձրեց մի կատարյալ դժոխք: Լոռին սի երջանիկ բացառություն կազմեց՝ Թումանյանի շնորհիվ:

Հ. Դ. Սոկոլովը 1919 թ. Թումանյանին ուղղած իր շնորհավորական հեռագրում նրան անվանել է հայ հասարակության խիղճը<sup>54</sup>: 1905–1906 թթ. Թումանյանի կյանքի այն կարևոր նշանաձողն էր, երբ ՅԵ-ամյա բանաստեղծն ազգամիջյան կոհիվների մեջ ներքաշված հայ ժողովրդի համար դարձավ Նահապետ, առաջնորդ, անառարկելի հեղինակություն, խաղաղասիրության արտահայտիչ, հավաքական կամքի, արիության և իմաստության խորհրդանիշ: Հենց այս հայ ժողովրդի համար արհավիրքի, դաժան փորձությունների բախտորոշ տարիներին նա դարձավ հայության խիղճը:

<sup>54</sup> «Ժողովրդի ձայն» (Թիֆլիս), 27. II. 1919:

ЭПИЗОДЫ НАЦИОНАЛЬНО-ОБЩЕСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ  
ОВАНЕСА ТУМАНЯНА (1905-1906 гг.)

*СУСАННА ОВАНЕСЯН*

Р е з ю м е

О миротворческой деятельности Ов. Туманяна сказано и написано немало, однако многие подробности, по-новому освещдающие национальную и общественную деятельность писателя, все еще остаются неизученными. Это документы из архивов современников поэта, публикации в армянской периодике начала минувшего столетия, архивные материалы судебного разбирательства, носившего название «Дашнакское дело». Межэтнические конфликты в странах Южного Кавказа явились откликом Первой русской революции. 1905-1906 гг. оказались важной, судьбоносной исторической вехой в жизни и судьбе армянского народа. Начались ожесточенные и кровопролитные армяно-татарские столкновения, в центре которых невольно оказался Туманян. В его распоряжение был предоставлен вооруженный русский отряд, в сопровождении которого армянский поэт, ежедневно подвергая свою жизнь опасности, с миротворческим белым флагом в руках, всегда оказывался в самой гуще событий, разъезжал по всем охваченным межэтническими конфликтами населенным пунктам, взяв на себя миссию справедливого и мудрого судьи, примиряющего конфликтующие стороны. Он проявлял непримиримость и нетерпимость к любым проявлениям звериных инстинктов, осуждал насилие, грабежи, убийства, боролся с подстрекательством и провокациями, с чьей бы стороны они ни исходили, сурово наказывал виновных и призывал враждующих к прекращению распреи.

---

FRAGMENTS OF HOVHANNES TOUMANIAN'S  
NATIONAL-PUBLIC ACTIVITIES (1905-1906)

*SUSANNA HOVHANNISYAN*

S u m m a r y

Hovhannes Toumanyan's peacemaking activities is much told and written about, but still a lot of details covering national and public work of the writer remain unexplored. These are documents from archives of contemporaries of the poet, publications in the Armenian periodicals of the past century, archival materials of juridical inquiries named "Dashnak Case". Interethnic conflicts in Southern Caucasus' countries were the response of the First Russian Revolution. 1905-1906 appeared to be important and fatal for life and destiny of the Armenian people. Fierce and bloody Armenian-Tatar collisions began, in the center of which Toumanyan involuntarily appeared. Accompanied by the Russian armed forces the Armenian poet, daily endangered his life, with a peacemaking flag of truce in his hands he always appeared in the peak of events driving about all settlements covered with interethnic conflicts, undertaking the mission of the fair and wise judge, reconciling the conflicting sides. He showed irreconcilability and intolerance to any displays of animal instincts, condemned violence, robberies, murders, struggled with instigation and provocations from whose sides they proceeded, severely punished those who were guilty and called the sides to bring conflicts to the termination.